

**ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԸ
ՈՏՆԱԼՎԱ**

Էվալդ Ֆրանկ

Ն եր ա ծ ու թ յ ու ն

Ջրի մկրտությունը և Տերունական Ընթրիքը աստվածաշնչային պատվերներ են, որոնք կիրառվում են քրիստոնեական եկեղեցիներից մեծ մասում, թեև տարբեր եկեղեցիներում արվում են տարբեր կերպ: Բայց առաջին եկեղեցուն դրանց կատարման սկզբնական ձևը մոռացվել է եկեղեցու պատմության ընթացքում: Տարիներ շարունակ եկեղեցու պատմագրերը և բարեփոխիչները վիճել և տարաձայնություններ են ունեցել դրանց վերաբերյալ՝ օգտագործելով նույն խոսքը: Բայց նրանք չկարողացան հասնել համաձայնության, և տարբերությունները մնացին: Դրանք չեն համապատասխանում առաջին եկեղեցու կատարած ձևերին, որոնց պետք է վերադառնանք:

Առաջին քրիստոնյաների մասին կարդում ենք.«...Միշտ հետևում էին առաքյալների ուսմունքին»: Նրանք ընդունում էին, որ առաքյալները կանչված են Տիրոջ կողմից և հաղորդ էին լինում Աստծո թագավորությանը վերաբերող գաղտնիքներին: Իր հարությունից հետո Տերը մնաց աշակերտների հետ «մինչև այն օրը, երբ Սուրբ Յոզու միջոցով պատվեր տվեց Իր ընտրած առաքյալներին ու համբարձվեց: Որոնց էլ Իր չարչարանքից հետո շատ ապացույցներով, կենդանի հայտնվեց՝ քառասուն օրվա ընթացքում երևալով նրանց ու Աստծո արքայության մասին խոսելով»: (Գործք 1:2-) Մենք ուրախանում ենք՝ իմանալով, որ Նա խոսել է Իր թագավորությանը վերաբերող բոլոր բաների մասին: Նա տվեց հանձնարարությունը: Պենտեկոստեի օրը Նա նրանց մեջ ուղարկեց Իր Յոզուն և հստակ հայտնեց, թե ինչ պետք է արվի և ինչպես պետք է արվի՝ համաձայն Աստծո կատարյալ կամքի:

Պողոս առաքյալը նրանց հետ չէր հենց սկզբից: Նախ նա ստացավ «աստվածաբանական կրթություն», բայց իր դարձի գալուց հետո քարոզում էր նույն ավետարանը և նույն ուսմունքները, ինչ որ առաքյալներն էին քարոզում: Ուղղակի հայտնություն ստանալով՝ 14 տարի հետո ուղևորվեց դեպի Երուսաղեմ՝ համեմատելու մյուս առաքյալների հետ՝ տեսնելու համար, թե իր քարոզչությունը համապատասխանում է նրանց քարոզչությանը: Այլապես նա վախենում էր, որ իզուր վազած կլինի: (Գաղատ.2:1-2)

«Գործք առաքելոց» գիրքը և «Թղթերը» վկայում են ուսմունքների կատարյալ ներդաշնակության մասին, որոնք ներդաշնակ են մաս չորս ավետարանների և Հին Կտակարանի հետ: Հետևաբար, այն ինչ մեզ տրվել է առաքյալների միջոցով, ճշմարիտ վարդապետություն է և գործունեություն: Այստեղ մենք գործ չունենք Պողոսի կամ Պետրոսի

կարծիքների հետ, այլ ուղղակի հայտնությամբ տրված Աստծո խոսքի և ծրագրի հետ: Նույնիսկ այսօր դա միակ արժեքավոր չափանիշն է, որով ամեն բան պետք է ստուգվի:

Մի անգամ Տերը հարցրեց Իր աշակերտներին.«Չասկացա՞ք այս ամենը»: Նրանք ասացին. «Այո՛, Տեր»:Նա էլ ասաց նրանց. «Դրա համար ամեն դպիր, որ երկնքի արքայությանն է աշակերտել, նման է տանտեր մարդու, որ իր գանձից նոր ու հին բաներ է հանում»: (Մատթ.13:51-52) Բոլոր ժամանակներում Տերն օգտագործել է մարդկանց, որոնց Նա կանչել էր Իր թագավորության հստակ նպատակների համար: Նրանք չէին ներկայացնում աստվածաբանական գիտությունը, որովհետև նրանք սովորել էին երկնային դպրոցում: Նրանք խոսում էին համաձայն երկնային իմաստության, որը ծածկված է այս աշխարհի իմաստուններից: Նրա պատգամաբերները միշտ ստացել են Իր խոսքը և Իր Հոգին: Ուստի նրանք ունեն Աստծո կամքի հստակ հայտնությունը և հետևաբար գիտեն, թե ինչպես ճշմարիտ ձևով կատարել այն: Դրա հաստատ նշանն այն է, որ նրանց քարոզչությունը և գործունեությունը կատարյալ ներդաշնակության մեջ են Սուրբ Գրքի հետ: Այն ժամանակ մեր Տերը և առաքյալները իրենց տրամադրության տակ ունեին միայն Հին Կտակարանը: Անընդհատ նրանք մեջբերումներ էին անում Հին Կտակարանից: Նոր Կտակարանում գտնում ենք Հին Կտակարանից 84 մեջբերումներ:

Այսօր ավետարանի քարոզիչները մեծ պատասխանատվություն ունեն Աստծո առջև: Յուրաքանչյուր ոք, ով ծառայում է Աստծո թագավորության մեջ, պետք է քաջություն ունենա իր ուսմունքն ու գործունեությունը համեմատել Պողոսի և մյուս առաքյալների ուսմունքի և գործունեության հետ: Եթե դա չի ներդաշնակում սկզբնական քարոզչությանը և գործունեությանը, ուրեմն ինչ-որ տեղ սխալ բան կա: Եթե Պողոսը անհրաժեշտ էր համարում իր ուսմունքը համեմատել առաքյալների վարդապետության հետ, համոզված լինելու համար, որ իզուր չի ծառայել, ինչպե՞ս կարող է մեզանից որևէ մեկը անտեսել այդ: Այն ամենի մեջ, ինչ սկզբնապես տրվել է Աստծո կողմից, մենք տեսնում ենք նմանակումներ և կեղծում, որոնք չեն համապատասխանում բնօրինակին:

Եփեսոսի եկեղեցուն ուղղված նամակում կարդում ենք. «... ու փորձեցիր նրանց, ովքեր առաքյալ են ձևանում, բայց չեն և պարզեցիր, որ սուտ են»: (Հայտն.2:2) Այդ դատողությունը հնարավոր էր, որովհետև լսողները քարոզվածը համեմատում էին սկզբնական առաքելական ուսուցման հետ: Աստվածաշնչին հավատացող այդ քրիստոնյաները նկատեցին, որ այս մարդիկ միայն պնդում էին, որ

առաքյալ են, բայց իրականում ստախոսներ էին, որովհետև չէին քարոզում մաքուր աստվածային պատգամը, ինչպես դա արել են առաջին առաքյալները:

Առաջին եկեղեցուն անորոշություն չկար ջրի մկրտության, Տերունական Ընթրիքի և այլ ուսմունքների վերաբերյալ: Տերը տվել էր հստակ ծանուցում, թե ինչպես պետք է այդ բոլոր բաները կատարվեն: Չետևաբար Նա ուղարկել էր նրանց, ում կարող էր ասել այդ բաների մասին: «Ձեզ լսողը Ինձ է լսում»: (Ղուկաս 10:16) Մենք կարիք ունենք բացահայտելու, թե Սուրբ Գրքում ինչպես են նկարագրված մկրտությունը և Տերունական Ընթրիքը: Տերունական Ընթրիքի հետ կապված է նաև ոտնալվան, որը նույնպես համառոտ կքննարկենք Աստծո խոսքի լույսի տակ:

Դեկտեմբեր 1986

Մ Կ Ր Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախ, համառոտ քննարկենք ջրի մկրտությունը: Տերը պատվիրեց մեզ մկրտել, ուստի մկրտությունը կատարվում է քրիստոնեական խմբերում: Եկեղեցու պատմությունն, անշուշտ, ցույց է տալիս շեղումները այդ նույն մկրտության ուսմունքից և կիրառումից: Առաջին եկեղեցուն մկրտության միայն մեկ ձև կար: Այսօր կան մկրտությունը կատարելու տարբեր ձևեր:

Եփեսոսի հավատացյալներին ուղղված խոսքը այսօր դեռ ուժի մեջ է ցանկացած վայրում ապրող ցանկացած հավատացյալի համար: «Մեկ Տեր կա, մեկ հավատք, մեկ մկրտություն»: (Եփես.4:5) Իրոք, միայն մեկ Տեր կա, այսինքն՝ Աստված, միայն մեկ ճշմարիտ հավատք՝ սուրբգրային հավատքը, միայն մեկ մկրտություն՝ առաքյալների կողմից կատարված մկրտությունը: Այս մեկնաբանության մեջ մենք ուզում ենք պատասխանել հետևյալ հարցերին. ի՞նչ է նշանակում մկրտությունը, ինչու՞ է այն կիրառվում, ո՞վ կարող է մկրտվել, և վերջապես, ինչպե՞ս է կատարվում մկրտությունը:

Ա Ն Ի Ր Ա Ժ Ե Ղ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Նոր Կտակարանի սկզբում Հովհաննես Մկրտիչը քարոզում էր.«Ապաշխարեցեք, որովհետև երկնքի թագավորությունը մոտեցել է»: (Մատթ.3:2) Մեր Տերը միշտ հիշատակում էր Հովհաննես Մկրտչին ու իր ծառայությունը: Դուկաս 7:29-30 համարներում Նա ասում է. «Եվ ամբողջ բազմությունը և մաքսավորներն էլ, երբ լսեցին, Աստծուն փառաբանեցին՝ Հովհաննեսի մկրտությունով մկրտվեցին: Բայց փարիսեցիներն ու օրենսգետները անարգեցին Աստծո խորհուրդն իրենց անձերի մասին՝ նրանից չմկրտվելով»: Նույնիսկ Հիսուս Քրիստոսը գնաց Հորդանան գետի մոտ՝ Հովհաննես Մկրտչի կողմից մկրտվելու համար՝ ասելով.«Թույլ տուր հիմա, որովհետև մեզ այսպես է վայել, որ ամեն արդարությունը կատարենք»: (Մատթ.3:15)

Հենց առաջին քարոզի ժամանակ, որը Պետրոսը ներկայացրեց Պենտեկոստեի օրը, նա ասաց հարց տվող բազմությանը.«Ապաշխարեցեք ու ձեզանից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողության համար և Սուրբ Հոգու պարգևը պիտի ընդունեք»:(Գործք 2:38) Մկրտությունը չի թողնված անձնավորության հայեցողությանը, այլ անհրաժեշտ է հավատացյալի հնազանդությունը ցույց տալու համար: Նա, որ գնահատում է Աստծո

փրկագնման աշխատանքը և հավատքով ընդունում է Քրիստոսին, հետևաբար ստանում արդարացում, պետք է դառնա Հիսուս Քրիստոսի հետևորդ: Պետրոս առաքյալը ցույց է տալիս մկրտության անհրաժեշտությունը Նոյյան տապանի օրինակով, ինչպես այդ մասին կարդում ենք 1Պետր.3:20-21 համարներում. «... երբ Աստուծոյ երկայնամտությունը սպասում էր նրանց Նոյի օրերում՝ տապանը պատրաստվելիս, որի մեջ քիչ, այսինքն ութ հոգի ջրից ազատվեցին, որ մեզ էլ այն օրինակի պես մկրտությունը հիմա փրկում է ...»:

Ջրհեղեղը կործանեց բոլորին, բացի տապանում գտնվողներից: Միայն մի քանի հոգի ուշադրություն դարձրին Նոյի քարոզչությանը: Միայն մի քանի հոգի հավատացին մարգարեի պատգամին և նրա հետ մտան տապանը: Կարող ենք հարցնել, թե ինչու է Պետրոս առաքյալն օգտագործում տապանի օրինակը հավատացյալների մկրտության մասին խոսելիս: Եթե մեկը անկեղծորեն հավատում է, նա կանի այն ամենը, ինչ Տերն ասում է և կմկրտվի Քրիստոսով: Նա մեր տապանն է, միակ ապաստանը և ապահով վայրը: Միայն Նրա մեջ կարող ենք խուսափել Աստծո վերահաս դատաստանից: Փրկությունը մեզ հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով: Այնուհետև հավատացյալները հնազանդվում են Աստծո հոսքին և մկրտվում Տեր Հիսուսի անունով: Եթե մեկը չի հետևում աստվածային պատվերին, նա ցուցաբերում է բացահայտ անհավատություն և անհնազանդություն Աստծո և Իր հոսքի հանդեպ և, հետևաբար, չի մտնում Քրիստոսի մեջ, որը մեր փրկության տապանն է: Երբ մեծ ջրհեղեղը սկսվի, շատերը, ովքեր իրենք քրիստոնյա են համարում, կտեսնեն, որ իրենք մնացել են դուրսը և կկործանվեն:

Անշուշտ, մարդիկ հարցրած կլինեն ջրհեղեղից առաջ.«Ինչու՞ պետք է մտնեմ տապանը: Որտե՞ղ է ջուրը: Մենք հավատում ենք Աստծուն, դա բավարար է: Ամեն բան շարունակվում է այնպես, ինչպես կար: Մեզ պետք չէ լսել այդ քարոզչին»: Նրանք չընդունեցին, որ Նոյը մարգարե է, ով հանձնարարություն է ստացել ուղղակի Տիրոջից: Ժամանակի հետադարձ հաշվարկը գործում էր այն ժամանակ, գործում է նաև հիմա: Չնայած այս բոլոր նախազգուշացումներին, մարդիկ գնացին իրենց սեփական ճանապարհով և ուշադրություն չդարձրեցին: Հանկարծ այդ օրը եկավ, և կանխատեսված աղետը պայթեց մարդկության վրա: Հանկարծ դուռը փակվեց: Դրսում գտնվողները կործանվեցին: Այսօր էլ թվում է, թե ամեն ինչ մնացել է այնպես ինչպես կար (2 Պետրոս 3:4), բայց շատ մոտ ապագայում՝ Քրիստոսի վերադարձի ժամանակ, տարբերությունը կզգացվի: Աստծո ժանը հանկարծակի է վրա հասնում: Շնորհիքի ժամանակը կավարտվի, և դուռը կփակվի:

Ներսում գտնվողները հավիտյան ապահով կլինեն:

Այդ կապակցությամբ մենք կարող ենք միայն կրկնել այն, ինչ ասվել է հնում. «Ուստի, ինչպես ասում է Սուրբ Հոգին՝ «Այսօր եթե Նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի՛ խստացրեք ինչպես ըմբոստության ժամանակ»: (Եբր.3:7-8) Մինչև վերջ ուժի մեջ է մնում խոստումը. «Նա, որ հավատա և մկրտվի, պիտի փրկվի»: (Մարկ.16:16) Ո՞վ է հոժար հնազանդվելու: Իսկական հավատքը երևում է Աստծո խոսքի նկատմամբ հնազանդության մեջ: Հավատքը առանց պահանջված գործերի ինքնին մեռած է և անօգուտ: Այդպիսի դեպքում դա ընդամենը կրոնական դավանանք է, որը դեռ ոչ ոքի չի փրկել: Միայն քրիստոնեական ուսմունքները ոչնչի չեն հասցնի: Ուսմունքները պետք է լինեն սուրբգրային և կապված լինեն մարդկանց փորձառությունների հետ: Մեր կապը Աստծո հետ խոսքի միջոցով է և այդ խոսքը կենդանացնող Հոգով: Միայն այն ինչ գալիս է Նրանից, տանում է մեզ Նրա մոտ: Հետևաբար ջրի մկրտությունը ոչ թե «կարելի» է, այլ «պարտադիր» յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի համար:

Ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ը

Մկրտությունը պարզապես մի գործողություն է, որով անձնավորությունը միանում է Քրիստոսի մահվան, թաղման և հարության հետ: Մկրտության մեջ մեղքերի թողություն չկա: Մկրտվող անձնավորությունը ցույց է տալիս, որ մեղքերի թողություն է ստացել Գողգոթայի խաչի վրա թափված արյան շնորհիվ: Պետրոս առաքյալն այսպես է գրում. «Դրա օրինակը, այսինքն՝ մկրտությունը, մեզ էլ հիմա փրկում է, ոչ թե մարմնի աղտը դեն գցելով, այլ բարի խղճմտանքի վկայությունն առ Աստված Հիսուս Քրիստոսի հարությամբ»: (1 Պետր.3:21) Նա, որ մկրտվում է, նույնանում է Քրիստոսի հետ՝ գիտակցելով, որ խաչվում է Նրա հետ:

Մկրտությունը հնազանդության գործողություն է հավատացյալի կողմից, համաձայն իր Փրկչի և Տիրոջ նկատմամբ ունեցած անձնական հավատքի խոստովանության: Նաև կարդում ենք Փիլիպոսի և ներքինու մասին, որոնք երկուսն էլ մտան ջուրը: Այսօր նույնպես մկրտությունը այսպես է կատարվում Աստվածաշնչին հավատացող բոլոր եկեղեցիներում: Թե՛ մկրտողը և թե՛ մկրտվողները մինչև գոտկատեղը մտնում են ջրի մեջ: Մկրտելուց առաջ մկրտողը այսպիսի մի բան պետք է ասի. «Այսինչ եղբայր կամ Այսինչ քույրիկ, ըստ քո հավատքի

խոստովանության, ես քեզ մկրտում եմ՝ համաձայն Աստծո խոսքի, Տեր Հիսուս Քրիստոսի անունով»։ Մկրտությունը համեմատվում է թաղման հետ։ Այդ պատճառով մկրտվողին դեպի ետ սուզում են ջրի մեջ և ամբողջովին ընկղմում, հետո նորից բարձրացնում։ Ջրից ելնելը նշանակում է, որ այդ անձնավորությունը հարություն է առել Քրիստոսի հետ՝ նոր կյանք ունենալու համար։ Բայց, իհարկե, նոր կյանքը ստանում ենք ոչ թե մկրտությամբ, այլ խոսքի և Սուրբ Հոգու միջոցով տրված վերստին ծնունդով։ Ցանկացած դեպքում, եթե ջուր են սրսկում կամ լցնում մկրտվողի գլխին, դա չպետք է նույնիսկ «մկրտություն» համարել, որովհետև մկրտություն չէ։

Առաքյալը գրում է Կողոս.2:12 համարում. «Թաղվելով Նրա հետ մկրտությամբ, որով նաև Նրա հետ հարություն առաք՝ հավատալով Աստծո զորությանը, որ մեռելներից հարություն տվեց Նրան»։ Սուրբ Գիրքը չի սովորեցնում, թե երեխան վերստին ծնվում է ջուր լցնելու կամ սրսկելու գործողության միջոցով, ընդհակառակը, հստակ սովորեցնում է, որ մարդիկ նախ պետք է լսեն Հիսուս Քրիստոսի Ավետարանը, ընդունեն խոսքի սերմը իրենց հոգու մեջ և ունենան նոր կյանք Սուրբ Հոգու կողմից տրված։ Միայն այդ ժամանակ նրանք պետք է մկրտվեն։ Բացի այդ, ջրով մկրտվել չի նշանակում ավտոմատ կերպով Սուրբ Հոգին ստանալ։ Սուրբ Հոգով մկրտությունը առանձին մկրտություն է։ Դա Աստծո պատասխանն է այն հավատացյալին, որը հնազանդ է եղել ջրի մկրտության մեջ։ Այդ դեպքում անձնավորությունը ստանում է այն վստահությունը, որ ինքը պատկանում է Աստծուն։

Հռովմ.6:4-5 համարներում առաքյալը ամփոփում է մկրտությունը հետևյալ խոսքերով. «Մկրտությամբ Նրա հետ մեռնելով թաղվեցինք մահի մեջ, որ ինչպես Քրիստոսը մեռելների միջից Հոր փառքով հարություն առավ, այնպես մենք էլ նոր կյանքի մեջ ընթանանք։ Որովհետև եթե Նրա մահվան նմանությամբ Նրա հետ միացանք, ապա Նրա հարությանն էլ նման կլինենք»։ Այդպիսի միտք նա արտահայտել է նաև Գաղատացիներին ուղղված իր նամակում, 3-րդ գլխի 26-27 համարներում. «Որովհետև ամենքդ Աստծո որդիներ եք՝ Քրիստոս Հիսուսին հավատալով։ Քանի որ ամենքդ որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսին եք հագել»։ Ոչ թե չոր մեղավորը մտնում է ջուրը, որպեսզի այնտեղից դուրս գա թաց մեղավորը, այլ մենք խոսում ենք այն մարդկանց նասին, ովքեր գտել են Աստծո շնորհքը, հաշտվել են Նրա հետ, համոզվել են, որ իրենց մեղքերը ներված են, ովքեր վստահ են, որ Աստված ընդունել է իրենց։

Պ ա յ մ ա ն ը

Սկրտվող անձնավորության համար մկրտվելու հիմնական պայմանը Փրկչի նկատմամբ ունեցած անձնական հավատքն է: Իր համբարձումից անմիջապես առաջ Տերը տվեց հստակ պատվեր.«Ասաց նրանց. «Ամբողջ աշխարհը գնացեք ու Ավետարանը քարոզեք ամեն արարածի: Նա, որ հավատա ու մկրտվի, պիտի փրկվի»:»(Մարկ.16:15-16) Ինչպես տեսնում ենք, նախ պետք է կատարվի ավետարանի քարոզչությունը, ոչ թե կրոնական գործողությունը:

Հիսուս Քրիստոսով Աստծո հետ հաշտության մասին քարոզելու միջոցով մարդկանց առաջարկվում է ընդունել Աստծո փրկության պատգամը: Ինչպես գրված է. «Հավատքը լսելուց է ու լսելը՝ Աստծո խոսքից»:(Հռովմ.10:17) Սկզբում պետք է ունկնդիրների սրտում հայտնվի Սուրբ Հոգու դրած հավատքը: Պետք է լինի ներքին «այո» Աստծո նկատմամբ և մեր սրտերի մեջ Աստծո շնորհքի ընդունումը: Անձնավորությունը նախ պետք է ունենա փրկության փորձառությունը, որի միջոցով դառնում ենք հավատացյալ: Ըստ Հռովմ.8:16 համարի «Նույն Ինքը Հոգին վկայություն է տալիս մեր հոգու հետ, թե մենք Աստծո որդիներն ենք»: Դա այն վստահությունն է, որ ունի յուրաքանչյուր ոք, ով արդարացված է Աստծո առաջ՝ փրկագնման կատարյալ գործին հավատալով:

Միայն սրանից հետո է գալիս հաջորդ քայլը, որը մկրտությունն է: Գործք 2:41 համարում կարդում ենք.«Նրանք, որոնք սրտանց ընդունեցին նրա խոսքերը, մկրտվեցին»: Դա կատարվեց անմիջապես այն բանից հետո, երբ Պետրոսը ներկայացրեց իր առաջին քարոզը Պենտեկոստի օրը: Արդյունքը հրաշալի էր: Մոտ 3000 մարդ հավատաց աստվածային պատգամին, հավատաց Աստծո խոսքին, որ քարոզվել էր իրենց և միանգամից ընդունեց մկրտությունը: Այս սուրբգրային օրինակը մնաց մինչև երրորդ դարը Քրիստոսից հետո:

Առաքյալները և Սուրբ Հոգու զորությամբ լցված ուրիշ մարդիկ դուրս եկան քարոզելու Ավետարանը: Նրանցից մեկը Փիլիպոսն էր, ում ծառայությունը զորավոր էր և հրաշալի արթնություն բերեց Սամարիայում: Այնտեղ նույնպես մարդիկ հավատքի եկան և մկրտվեցին Տեր Հիսուսի անունով: (Գործք 8:16)

Ավետարանիչը թողեց արթնությունը և Սուրբ Հոգով առաջնորդված գնաց եթովպացու մոտ, որն այդ պահին կարդում էր Եսայի մարգարեի գրքի 53-րդ գլուխը: (Գործք 8:26-39) «Փիլիպոսն էլ սկսեց խոսել և այս գրքից սկսելով՝ նրան Հիսուսի մասին ավետարանեց»:(հ.

35) Քարոզչությունը հիմնված էր մարգարեական խոսքի վրա, որում կանխատեսվում էր այն փրկությունը, որն Աստված տալու էր մարդկությանը: Քարոզի ընթացքում ունկնդիրը ընդհատեց Աստծո մարդուն և ասաց. «Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում, որ մկրտվեմ»:(հ. 36) Պայմանը բավարարված էր: Փիլիպոսի վարմունքը լիովին համապատասխանում էր Աստծո խոսքին և առաքյալների ուսմունքին, և նա հարցրեց. «Եթե քո ամբողջ սրտով հավատում ես՝ կարելի է»:(հ. 37) Պատասխանը անմիջական էր.«Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է»: Ի՞նչ հրաշալի դարձ:

«Ու հրամայեց, որ կառքը կանգեցնի. երկուսն էլ՝ Փիլիպոսն ու ներքինին ջուրը իջան և նա մկրտեց նրան»:(հ. 38) Հավատքը եկավ քարոզչությունից, իսկ քարոզչությունը՝ Աստծո խոսքից: Սուրբ Հոգին գործեց ունկնդրի սրտում, և նա մկրտվելու ցանկություն հայտնեց:

Հատուկ հայտնությամբ Պետրոսը գնաց Կեսարիայում ապրող հռոմեացի հարյուրապետ Կոռնելիոսի տուն: Նրա քարոզչությունը բերեց սուրբգրային արդյունք, ինչպես սկզբում: Այդ մասին գրված է այսպես. «Երբ Պետրոսը դեռ խոսում էր այս բանը, Սուրբ Հոգին իջավ բոլոր այդ խոսքը լսողների վրա»:(Գործք 10:44)

Տեսնում ենք, որ Սուրբ Հոգին գործում է այնտեղ, որտեղ քարոզվում է խոսքը: Հավատացյալների համար անհրաժեշտ է կատարել ողջ արդարությունը և այն ամենը, ինչ պատվիրում է Տերը: Այնժամ առաքյալն ասաց. «Մի՞թե մեկը կարող է արգելել, որ սրանք մկրտվեն ջրով, որոնք Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպես մենք»: Եվ հրամայեց նրանց, որ մկրտվեն Տիրոջ անունով»:(հհ.47-48) Ամեն ճշմարիտ սպասավոր կիեռևի նույն օրինակին, և ամեն հավատացյալ պետք է փափագի մկրտվել սուրբգրային եղանակով, եթե նույնիսկ արդեն ստացել է Սուրբ Հոգին: Այն, ինչ սկսվում է Աստծո հետ, հարատև է մնում, առանց չնչին փոփոխության:

Սուրբ Գրքում ոչ մի աննշան ակնարկ չկա մանուկների մկրտության կամ մանուկների վրա ջուր սրսկելու վերաբերյալ: Նա, որ փորձում է արդարացնել Սուրբ Գրքին հակառակ այդ սովորությունը՝ վկայակոչելով Ղուկաս 18:15-17 համարները, պետք է կարդա նաև Մատթ.19:13-15 և Մարկ.10:13-16 համարները: Առանց որևէ կասկածի պարզ է, որ մեր Տեր Հիսուսը միայն օրհնեց իր մոտ բերված երեխաներին: Նա ձեռքը դրեց նրանց վրա և գրկեց նրանց: Այստեղ ամենևին չի խոսվում ջրի մկրտության կամ ջուր սրսկելու մասին: Նույնիսկ այսօր հավատացյալ ծնողները իրենց երեխաներին բերում են Աստվածաշնչին հնազանդվող եկեղեցի, որպեսզի

մանուկները ներկայացվեն և ընծայվեն Տիրոջը և օրհնվեն Նրա անունով: Մյուս համարը, որ սխալմամբ մեջբերվում է՝ արդարացնելու համար մանկան մկրտությունը, ոչ մի խոսք չի ասում այդ մասին: Երբ Պողոսն ու Շիղան Փիլիպեի բանտում էին, գերբնական մի բան կատարվեց: Բանտապետը սաստիկ վախեցավ, եկավ և հարցրեց Աստծո մարդկանց. «Տերե՛ր, ի՞նչ պետք է անեն, որ փրկվեն»: Նրանք ասացին. «Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես դու և քո ընտանիքը»: (Գործք 16:30-31) Հենց հաջորդ համարում կարդում ենք մկրտության ընթացքի մասին: «Եվ Տիրոջ խոսքը խոսեցին նրան և բոլոր նրանց, ովքեր նրա տանն էին»:

Մենք տեսնում ենք, թե ինչքան ճշգրիտ կերպով պահեցին պատվերը՝ ըստ սկզբնական հանձնարարության: Մինչև մկրտությունը քարոզվեց խոսքը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը, լսողները հավատացին և նոր միայն մկրտվեցին:

Բանտապետի մասին կարդում ենք. «Եվ նա գիշերվա նույն ժամին նրանց վերցրեց, վերքերը լվաց, և իսկույն մկրտվեցին ինքը և բոլոր յուրայինները»: (հ.33) Խնդրում են, ուշադրություն դարձրեք. նախ, եղավ քարոզչությունը, որը լսեցին բոլորը, հավատացին և միայն դրանից հետո մկրտվեցին: Այստեղ ոչինչ չի ասվում մանուկների մասին:

Այսօր մկրտության այն եղանակը, որ սովորաբար կիրառվում է, զուրկ է աստվածաշնչային հիմքից: Դա նաև հաստատվում է եկեղեցու պատմությամբ: Սուրբ Գրքին հակառակ մկրտության այս ձևը գալիս է այն ժամանակաշրջանից, երբ բռնի կերպով քրիստոնյա էին դարձնում ողջ ազգերին: Այդպիսի դեպքերում ընտանիքի բոլոր անդամների, նաև երեխաների ճակատին կաթեցնում էին 3 կաթիլ ջուր: Հավատքը փոխարինվեց կնքահայրերով և կնքամայրերով, որոնց մասին Աստվածաշունչը բնավ չի խոսում: Մեր քննարկածից կարող ենք հասկանալ, որ անձնավորությունը պետք է Աստծո առաջ անձնական որոշում ընդունի: Տխուր է ասել, որ այսօրվա քրիստոնեական եկեղեցիների քարոզչությունը չի համապատասխանում առաքելական օրինակին, հետևաբար, Աստվածաշնչում նկարագրված արդյունքներ չի բերում:

ԱՆՈՒՆՐ

Սուրբ Գրքում մեկ ուրիշ համար կա, որ այնքան շատ է սխալ հասկացվել և սխալ օգտագործվել: Դա Մատթ.28:19 համարն է, որ ասում է. «Ուրեմն, գնացեք, բոլոր ազգերին աշակերտ դարձրեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: Անհասկանալի է, բայց այնուամենայնիվ ճշմարիտ. երրորդ դարում այս բաները բոլորովին սխալ հասկացվեցին և սկսեց կիրառվել եռամիասնական ֆորմուլան, որը մինչև հիմա էլ կիրառվում է: Թվում է, ոչ ոք չի նկատում, որ Տերը խոսում է Անվան մասին: Ո՞րն է այն անունը, որով պետք է մկրտվենք: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին արտահայտում են Աստծո դրսևորման տարբեր ձևերը: Բայց մինչև մկրտելը մենք պետք է իմանանք Անունը: Անձնավորությունը կարող է շատ պաշտոններ ունենալ. կարող է լինել ուսուցիչ, իրավաբան, դատավոր և այսպես շարունակ: Մեկը կարող է լինել և՛ հայր, և՛ որդի, և՛ ամուսին և այլն: Դրանք այդ անձնավորության ունեցած դիրքի նկարագրություններն են և իրենց տեղն ունեն, բայց պետք է ճիշտ օգտագործվեն: Բայց յուրաքանչյուր ոք, լինի դա ուսուցիչ, կամ իրավաբան, կամ դատավոր, անուն ունի: Նույնն էլ Աստված, որ հայտնվեց տարբեր կերպերով և Հին Կտակարանում հայտնվեց Յահվե անունով, որը ուխտի հետ կապված անունն է: Ջրի մկրտության ժամանակ մենք պետք է իմանանք Նրա այն անունը, որ կապված է Նոր Կտակարանի ուխտի հետ: Մատթ.28-րդ գլխում ընդամենը պատվիրան տրվեց մկրտելու այն անունով, որով Նա հայտնվեց, որպես Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Բայց անունն Ինքը չհիշատակվեց:

Այժմ մենք կքննարկենք մի շարք համարներ, որտեղ խոսվում է միայն Անվան մասին: Դա շատ կօգնի մեզ և նրանց, ովքեր փնտրում են ճշմարտությունը: Դուկաս 10:17 համարում կարդում ենք.«Այն յոթանասունն ուրախացած հետ դարձան և ասացին. «Տե՛ր, դներն էլ են Քո անունով մեզ հնազանդվում»: Չէ՞ որ ինքնաբերաբար հասկանում ենք, որ խոսքը Հիսուսի Անվան մասին է, եթե նույնիսկ անունը չի ասվում: Իհարկե, հասկանում ենք: Մի առիթով Տերն ասաց. «Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի Իմ Անունով հավաքված լինեն, ես այնտեղ նրանց մեջ եմ»:(Մատթ. 18:20) Ո՞վ կկասկածի, որ Նա նկատի ուներ Հիսուս անունը, եթե նույնիսկ Նա չասաց այդ: Դուկաս 24:47 համարում մենք կարդում ենք. «Եվ Նրա անունով, Երուսաղեմից սկսած, բոլոր ազգերի մեջ ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվեք»: Յուրաքանչյուր ոք, ով կարդում է այս հատվածները, գիտի, թե որ անվան մասին է խոսքը: Հովհ.2:23 համարում կարդում

ենք.«...չատ մարդիկ Նրա անվանը հավատացին՝ տեսնելով Նրա գործած հրաշքները»: Շատ տարօրինակ է, որ բոլորը հասկանում են, թե ինչ անվան մասին է խոսքը, երբ կարդում են այդ հատվածները, միայն Մատթ.28:19 համարը կարդալիս չեն հասկանում: Դա իսկապես տարօրինակ է: Պետք է լրջորեն մտածել այդ մասին:

Մինչև հիմա նշված համարներում մենք խոսեցինք Որդու Անվան մասին, բայց հաջորդ համարներում կխոսենք Հոր Անվան մասին: Այժմ մենք քայլում ենք Աստծո հայտնությունների առանձնահատուկ հիմքի վրա: Տերը սովորեցրեց մեզ աղոթել.«Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը»:(Մատթ.6:9) Այս աղոթքը միլիոնավոր մարդիկ կրկնում են ամեն կիրակի, և ոչ ոք չի մտածում կամ չի հարցնում. ո՞րն է Հոր Անունը, որ պետք է սուրբ լինի: Հովհ.12:28 համարում Որդին ասաց.«Հայր, փառավորի՛ր Քո անունը»: Եվ երկնքից ձայն եկավ.«Փառավորեցի էլ ու դարձյալ կփառավորեմ»: Ո՞ր Անվան մասին էր Նա խոսում: Ո՞րն էր այն Անունը, որ Աստված փառավորել էր և էլի պետք է փառավորեր: Միայն մեկ Անուն կա, որով կարող ենք մոտենալ Աստծուն: Դա Իր իսկ Անունն է:

Իր աղոթքում Որդին նորից դիմում է Հորը և ասում.«Քո Անունը հայտնեցի այն մարդկանց, որոնց աշխարհից տվեցիր Ինձ»: (Հովհ.17:6) Արդյո՞ք դա վերաբերում է Աստծո՞ Հին Կտակարանի անուններից մեկին: Անշուշտ՝ ոչ: Նա, որ ուշադիր է կարդացել այս խոսքը, նկատած կլինի, որ Հոր անունը հայտնվում է բոլոր նրանց, ովքեր պատկանում են Տիրոջը՝ աշխարհից փրկագնվելով: Նրանք Աստծո ճշմարիտ որդիներն ու դուստրերն են: Աստված ճանաչում է նրանց, և նրանք ճանաչում են Աստծուն: Այժմ այս հարցը պետք է բերենք ընդհանուր հայտարարի: «Ով սուրբ Հայր, Քո Անունով պահիր նրանց, որ Դու Ինձ տվեցիր, որպեսզի մեկ լինեն, ինչպես մենք մեկ ենք»: (Յովհ.17:11) Ավելի պարզ չէր կարող ասվել: Որդու Անունը Հոր Անունն է: Այսպես, 26 համարում կարդում ենք. «Քո Անունը նրանց ճանաչել տվեցի և ճանաչել կտամ»: Մենք գործ ունենք միայն մեկ Աստծո հետ, որ միայն մեկ Անուն ունի: Մեր Տերը հրեաներին ասաց. «Ես Իմ Հոր անունով եկա և Ինձ չեք ընդունում: (Հովհ.5:43) Իսկ ի՞նչ կասեք այսօրվա քրիստոնյաների մասին: Նրանք ընդունում են Նրան՝ ճանաչելով, որ Հոր և Որդու Անունը նույնն է:

Երանի նրան, ով հավատում է, որ Հայրը հայտնվեց Որդու մեջ և բացահայտեց մեզ համար այն Անունը, որ վեր է ամեն անունից՝ Հիսուս, Էմմանուել՝ Աստված մեզ հետ: Աստված միայն մեկ անձի մեջ հայտնվեց, որը Հիսուս Քրիստոսն է: Աստված միայն մեկ Անուն ունի,

որը պետք է հայտնվի մեր մեջ. այդ Անունն է՝ Տեր Հիսուս Քրիստոս: Այդ Անունով կարող ենք մոտենալ Հորը և շնորհաց աթոռին: Ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու դավանի, որ Հիսուսն է Տերը:

Աստված մեզ հանդիպեց Քրիստոսով, և միայն Քրիստոսով կարող ենք հանդիպել Աստծուն: Այս մի քանի օրինակների լույսի տակ պետք է լուծվի Մատթ.28:19 համարի պրոբլեմը: Այստեղ խոսվում է Անվան մասին, առանց հիշատակելու այն, իսկ հետո մի կողմ են թողնվում այդ միակ Անվանը պատկանող կոչումները, և միայն Անունն է կիրառվում մկրտության ժամանակ:

Առաքյալների վարդապետությունը

Այժմ պետք է տեսնենք, թե ինչպես էին կատարում մկրտությունը առաջին եկեղեցուն: Պետրոսը նրանցից էր, ովքեր լսեցին, երբ Տերը տվեց մեծ հանձնարարությունը, որի մասին գրված է Մատթ.28-րդ գլխում: Պետրոսը նա էր, ում Հիսուսը տվեց Թագավորության բանալիները, ինչը նշանակում է, որ նա մուտք ունի այն ամենի մեջ, ինչ պատկանում է Աստծո Թագավորությանը: Մինչև Սուրբ Հոգու գալուստը նա կանգնեց 120 հավատացյալների մեջտեղում և սկսեց այդ իրադարձությունները դասավորել ըստ Սուրբ Գրքի: (Գործք 1:15) Պենտեկոստի օրը՝ Սուրբ Հոգով լցվելուց անմիջապես հետո նա քարոզեց հավաքված բազմությանը. «Երբ այս լսեցին, իրենց սրտում զղջացին և Պետրոսին ու մյուս առաքյալներին ասացին. «Ի՞նչ անենք, եղբայր մարդիկ»: (Գործք 2:37) Որտեղ էլ այսօր քարոզվի նույն Ավետարանը և նույն Քրիստոսը, սրտերը կզղջան, կտրվի նույն հարցը և միևնույն պատասխանը. «Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարեցեք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար»: (հ 38) Սա առաջին առիթն էր, երբ գործի մեջ դրվեց մեծագույն հանձնարարությունը: Հավատացյալները մկրտվեցին ըստ Մատթ. 28:19 համարի, այն անունով, որի մասին Տերը խոսեց:

Յուրաքանչյուր մարդ գիտի անվան և կոչման միջև եղած տարբերությունը: Այն փաստարկը, որ Հիսուսի խոսքերը ավելի կարևոր և ծանրակշիռ են, քան առաքյալների խոսքերը, չի համոզի աստվածավախ անձնավորությանը: Յուրաքանչյուր վերստին ծնված անձնավորություն կհավատա, որ ողջ Սուրբ Գիրքը ներշնչված է Աստծուց և լիովին ճշմարիտ է: Եթե ինչ-որ մեկը հակասություն է գտնում Աստծո խոսքի մեջ, նա պետք է ավելի շուտ հավատա, որ հակասությունը իր գլխում է, ոչ թե Աստծո խոսքում: Մենք փափագում ենք տեսնել թե ինչպես է Հոգին առաջնորդում առաքյալներին մեծ հանձնարարությունը իրագործելիս:

Նախապես արդեն նշել ենք, որ սամարացիները հավատացին և մկրտվեցին: Այդ արթնության մասին լուրը հասավ Երուսաղեմ: Այդ մասին մենք կարդում ենք. «Երբ Երուսաղեմում գտնվող առաքյալները լսեցին, որ Սամարիան ընդունել է Աստծո Խոսքը, Պետրոսին ու Յովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ: Սրանք իջան ու նրանց համար աղոթեցին, որպեսզի Սուրբ Հոգին ընդունեն: Որովհետև նրանցից ոչ մեկի վրա դեռ չէր իջել միայն Տեր Հիսուսի Անունով էին մկրտված»: (Գործք 8:14-16) Շեշտը դրվում է այն փաստի վրա, որ նրանք մկրտվեցին Տեր Հիսուսի Անունով: Դա շա՞տ տարօրինակ է: Թերևս՝ ոչ: Կոռնելիոսի տանը Պետրոսը պատվիրեց, որ հավատացյալները մկրտվեն Տիրոջ անունով: (Գործք 10:48) Մենք տեսնում ենք, որ ողջ Նոր Կտակարանում շարունակ ուսուցանվում է ջրի մկրտության մասին : Ոչ մի աստվածաբան չի կարող ժխտել այդ, որովհետև Աստծո Խոսքն ինքը վկայում է այդ մասին: Պողոսը նույնիսկ ասում է. «Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի հրեշտակ նրանից տարբեր բան ավետարանի, քան մենք ձեզ ավետարանեցինք, նզովված լինի» (Գաղատ.1:8)

Բոլորը նկատած կլինեն, որ մկրտությունը կատարվել է Հիսուս Քրիստոսի Անունով: Առաքյալները ճիշտ էին հասկացել այն , ինչ ասել և պատվիրել էր Տերը: Նրանք ամեն բան կատարեցին ճիշտ այնպես, ինչպես պատվիրել էր Տերը: Այդ հանձնարարությունը պետք է կարդալ դանդաղ, ուշադիր և աղոթքով. «Ուրեմն գնացեք, բոլոր ազգերին աշակերտ դարձրեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: Արդ, Հայրը անուն չէ, ոչ էլ Որդին կամ Սուրբ Հոգին է անուն: Դրանք նկարագրում են նույն Աստծո հայտնության տարբեր ձևերը: Առաքյալները սովորեցին հենց Տիրոջից, նրա հարությունից հետո 40 օրերի ընթացքում: Նա խոսեց Աստծո Թագավորությանը վերաբերող բոլոր բաների մասին, իսկ մկրտությունն, անշուշտ, գլխավոր ուսմունքներից մեկն է: Նրանք ճանաչեցին այն Անունը, որով Աստված հայտնվեց որպես Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Դա է այն Անունը, որով մկրտվում են ճշմարիտ հավատացյալները: Նրանք ճշտությամբ կատարեցին այն, ինչ հանձնարարված էր իրենց: Գոնե նրանք կարողացան տարբեր դրսևորումների հետ կապված կոչումները տարբերել մեր փրկության համար տրված Անունից:

Այժմ դառնանք Պողոսին, ում Տերը Հիսուս Քրիստոսի անմիջական հայտնությամբ ընտրեց որպես առանձնահատուկ անոթի: Ինչպե՞ս էր նա մկրտում: Երբ նա եկավ Եփեսոս, նա գտավ 12 աշակերտների, որոնք գիտեին միայն Յովհաննեսի մկրտության մասին: Հետո նրանց հայտնեց փրկության ծրագիրը և անմիջապես եղավ աստվածաշնչային արդյունքը. «Եվ երբ լսեցին, Տեր Հիսուսի Անունով մկրտվեցին»: (Գործք 19:5)

Ամեն բան պետք է հաստատվի ամենաքիչը 2 կամ 3 վկաներով:

Մենք քննարկեցինք այն, ինչ կատարվեց Երուսաղեմում, Սամարիայում, Կոռնելիոսի տանը և Եփեսոսում. մենք հասկանում ենք, որ, անկախ նրանից, թե հրեաներ են, սամարացիներ կամ հեթանոսներ, քարոզում են Պետրոսը, Փիլիպոսը կամ Պողոսը, ամեն տեղ մկրտությունը կատարվում է Տեր Հիսուսի Անունով : Ինչպես արդեն նշեցինք, Սուրբ գրքում հակասություններ լինել չեն կարող: Աստծո Հոգին երբեք երկու կամ երեք տարբեր հայտնություններ չի տալիս նույն թեմայի վերաբերյալ:

Այդ առաջին սերնդի մեջ Աստված ընտրեց Իրեն պատկանող մարդկանց: Լիներ դա Պետրոսը, Պողոսը, թե ուրիշ մարդիկ, նրանք քարոզում էին նույն Ավետարանը և մկրտում նույն ձևով: Դա կատարվում էր սուրբգրային բոլոր համարների հետ կատարյալ ներդաշնակության մեջ: Ո՞վ կհամարձակվի ենթադրել ,որ այն մարդիկ, ովքեր քայլել են Հիսուսի և Պողոսի հետ, ովքեր հանդիպել են Տիրոջը պայծառ փայլուն լույսի մեջ, սխալ էին հասկանում Տիրոջ ասածը և մկրտում էին սխալ ձևով՝ դրանով հերձվածողություն առաջացնելով հենց նոր ստեղծված Նոր Կտակարանի եկեղեցու մեջ: Նույնիսկ այդպիսի միտքը

միայն հայիոյություն է: Նորից լսենք Պողոսին, որը գրում է հռոմեացիներին. «Կամ չգիտե՞ք, թե մեզանից քանիսը, որ Հիսուս Քրիստոսով մկրտվեցինք, Նրա մահվանը մկրտվեցինք»:(Հռոմ.6:3) Նա այստեղ իրեն դասում է այն մարդկանց շարքին, ովքեր մկրտվել են Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: Ինչպե՞ս եք դուք մկրտվել: Սուրբ Գրքում չկա մի դեպք, որտեղ որևէ մեկը մկրտված լինի եռամիասնական ֆորմուլայով՝ օգտագործելով Հայր, Որդի և Սուրբ Հոգի կոչումները: Այս փաստին պետք է շատ լրջորեն վերաբերվել: Բոլոր նրանք, ովքեր կանչված էին ծառայության և լցված էին Սուրբ Հոգով, ունեին նույն հասկացողությունը, նույն վարդապետությունը, նույն հավատքը, նույն մկրտությունը և այլն: Բոլորը կատարյալ ներդաշնակության մեջ էին Տիրոջ, Նրա Խոսքի և միմյանց հետ: Մկրտելիս ոչ ոք չէր մեջբերում Մատթ. 28-րդ գլխում գրվածը: Մենք գիտենք, որ դա ասվել է ոչ թե հոգնակի, այլ եզակի թվով. «..մկրտելով նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»:(անունով, ոչ թե անուններով) Մեր Տերը չասաց Հոր Անունով, Որդու Անունով, Սուրբ Հոգու Անունով: Անունը հիշատակվում է միայն մեկ անգամ և եզակի թվով: Նրանք հավատում էին, որ Աստված հայտնվեց, որպես Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Եվ նրանք ճանաչում էին այն Անունը, որ կապված է երեք հայտնությունների հետ: Նրանք ապրում էին Աստծո հետ կատարյալ հաղորդակցության մեջ: Նրանք աստվածաբանական ազդեցության տակ չէին, ոչ էլ տալիս էին իրենց սեփական մեկնաբանությունը, այլ ունեին աստվածային հայտնությունը:

Եթե ինչ-որ մեկը վերցնի Մատթ. 28-րդ գլխում գրվածի տառը առանց հայտնության, ապա 19 համարը պարզապես կկրկնվի, առանց

հասկանալու, թե որն է այդ հանձնարարության իմաստը: Մատթ.28-րդ և Մարկ.16-րդ գլուխները խոսում են Տիրոջ վերջին և մեծ հանձնարարության մասին, որոնց իրագործումը տեսնում ենք «Գործք Առաքելոց» գրքում: Դա հավիտենապես ճշմարիտ չափանիշն է և միակ սուրբգրային մուշշը, քանի դեռ գոյություն ունի կենդանի Աստծո եկեղեցին: Օրինակ, եթե ուսուցիչը խնդիր առաջարկեր աշակերտներին, նա անշուշտ կսպասեր պատասխանին, արդյունքին, ոչ թե մաթեմատիկական խնդրի կրկնությանը: Եթե ուսուցիչն ասի.«Ինչի՞ է հավասար 3×3 » և պատասխանը լինի « $3 \times 3 = 3 \times 3$ », բոլորս կիմանանք, որ ինչ-որ բան սխալ է, քանի որ պատասխանը չտրվեց: Ինչ վերաբերում է մկրտությանը, նույնիսկ ուսուցիչներն են կրկնում խնդիրը և պատասխանը չեն տալիս: Փոխանակ կատարեն Տիրոջ ասածը, նրանք մեխանիկորեն կրկնում են Նրա ասածը:

Միայն այն ժամանակ, երբ գործենք այնպես, ինչպես առաքյալներն են գործել, համոզված կլինենք, որ նույն Տերը մեզ կանչել է քարոզելու նույն Ավետարանը:

Վաղ եկեղեցու առաքյալները և վարդապետները հասկացել էին հանձնարարությունը և կատարեցին այն ըստ Հիսուս Քրիստոսի կատարյալ հայտնության: Փառք Աստծուն, որ մենք ունենք գրավոր վկայությունը: Մեզ պետք է միայն նույն Սուրբ Հոգու լույսը, որ կարողանանք տեսնել այնպես, ինչպես առաքյալներն էին տեսնում, սովորեցնել այնպես, ինչպես նրանք էին սովորեցնում և մկրտել այնպես, ինչպես նրանք էին մկրտում: Սուրբ Գրքում հստակ է ընդգծված այդ մեկնաբանությունը: Ամեն ոք պետք է լրջորեն վերաբերվի դրան: Համախ երկու բաներ կարող են նման լինել իրար, բայց նույնը չեն: Կարող է թվալ, որ նրանք մոտ են իրար, բայց միաժամանակ կարող

են իրարից այնքան հեռու լինել, որքան երկինքն է երկրից հեռու: Մենք չպետք է ուրանանք Տիրոջ անունը: Ֆիլադելֆիայի եկեղեցուն ասվել է. «Որովհետև քիչ զորություն ունես, բայց Իմ հոսքը պահեցիր և Իմ Անունը չուրացար»: (Հայտն.3:8) Իսկ ի՞նչ ասենք այն հավատացյալների մասին, ովքեր այնքան զեղեցիկ երգում են Հիսուսի Անվան մասին, օգտագործում են այդ Անունը իրենց աղոթքներում, այնքան զորավոր կերպով քարոզում են այդ Անվան մասին, բայց երբ խոսքը վերաբերում է վճռական որոշում ընդունելուն, նրանք ուրանում են այդ Անունը և չեն ուզում մկրտությամբ միանալ այդ Անվանը: Առողջ բանականությունը մեզ այդպիսի դեպքում կասի, որ ինչ-որ բան ինչ-որ տեղ այնպես չէ: Իսկ ի՞նչ կասեք այն մեծ ավետարանիչների մասին, ովքեր օգտագործում են Հիսուսի Անունը դևեր հանելու, հիվանդների համար աղոթելու, այդ հզոր Անունով հրաշքներ գործելու համար, բայց երբ խոսքը վերաբերում է մկրտելուն այն Անունով, որը նրանք այնքան շատ են օգտագործում, նրանք մերժում

են և պայքարում դրա դեմ: Նրանք շրթունքներով վկայում են, թե որքան հրաշալի է Հիսուսի Անունը, բայց իրականում չեն ճանաչում այդ Անունը և պատրաստ չեն նախատինք կրելու այդ Անվան համար: Այդպիսի մարդկանց մասին Տերն արդեն խոսել է Մատթ. 7:22-23 համարներում. «Այն օրը շատերն ինձ կասեն. «Տեր, Տեր, չէ՞ որ Քո Անունով մարգարեացանք, ու Քո Անունով դևեր հանեցինք, Քո Անունով շատ հրաշքներ գործեցինք»: Ես էլ այն ժամանակ նրանց հստակ կասեմ. «Ձեզ երբեք չեն ճանաչել. ինձանից հեռացեք, ով անօրենություն գործողներ»:

Այս համարը խոսում է ողջ Ավետարանին հավատացող քրիստոնյաների մասին: Մի կողմից նրանք մասնակցում են եկեղեցուն խոստացված և տրված օրհնություններին, մյուս կողմից մնում են ոչ սուրբգրային և ավանդական ուսուցման մեջ: Նրանք պատրաստ չեն ընդունելու սուրբգրային խրատը: Չէ՞ որ բոլորս պետք է հոժար լինենք ընդունելու այն, ինչ ասում է Աստվածաշունչը: Բայց քաջություն է պետք կառչելու համար Աստծո խոսքից և մերժելու ավանդական, դեմոնիացիոն և ոչ սուրբգրային մկրտությունը: Մենք պետք է մկրտությամբ նույնամանք Քրիստոսի մահվան հետ, եթե ուզում ենք նույնանալ Նրա հետ նոր կյանքի հարությանը: (Հռովմ. 6:3)

Հոգիների գանազանում

Անհրաժեշտ է քննարկել այնքան կարևոր այդ հարցը: Այսօրվա ավանդական եկեղեցիներում դժվար թե գտնենք ուսուցում ճշմարիտ դարձի և վերստին ծննդյան մասին: Եթե նույնիսկ այդ տերմիններն օգտագործվում են, փորձառությունը պակասում է: Բայց նաև այն քրիստոնյաների շրջանում, ովքեր ասում են, որ հավատում են ողջ Ավետարանին, հիմնական ուսմունքներին ուշադրություն չեն դարձնում: Ինչպե՞ս է եղել, որ Աստվածաշնչի ուսուցիչները և կրթված աստվածաբանները չեն կարողացել տեսնել, թե ինչպես պետք է լինի իսկական սուրբգրային մկրտությունը: Եթե ոչ ոք երբևէ չի մկրտվել՝ օգտագործելով «Հայր, Որդի և Սուրբ Հոգի» ֆորմուլան, ինչու՞ Աստծո ծառաները խրատ չեն ընդունում: Նրանք կատարում են մի մկրտություն, որը հնարվել և ներմուծվել է այն ժամանակ, երբ ստեղծվել է Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Տխուր է, բայց ճշմարիտ, որ նույնիսկ Ռեֆորմացիայի օրերից սկսած բոլոր եկեղեցիները սկսեցին կիրառել նույն ոչ սուրբգրային մկրտությունը, մինչև մեր օրերը: Շատերը կգարմանն իմանալով, որ նույն ֆորմուլան «Արևմտյան աշխարհում» կիրառվում է օկուլտիզմի, սպիրիտիզմի մեջ, երբ կանչվում են երեք բարձր անունները, կամ սրբազան ֆորմուլան,

որն օգտագործվում է ոգեմիջնորդային կախարդության մեջ, որտեղ հաղորդակցվում են մեռածների հոգիների հետ: Նույն ֆորմուլան է օգտագործվում, երբ երդում են ընդունում մասոնական ժողովների միանալու համար: Նրանք, ովքեր կասկածում են այդպիսի ժողովների մասնակցելիս, մի քիչ ավելի լավ են զգում, երբ լսում են «Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու» ֆորմուլան: Նույնիսկ կախարդությամբ զբաղվելիս նրանք կարծում են, որ դա Աստծուց է, որովհետև այդ ֆորմուլան լավ ծանոթ է իրենց, քանի որ այնքան շատ են այն լսում եկեղեցում: Լինի դա սպիտակ կամ սև մոգության մեջ, թե Մովսեսի «Վեցերորդ և յոթերորդ գիրքը» օգտագործելիս, ամեն տեղ նույն ֆորմուլան է օգտագործվում:

Եթե այդպիսի գործերի մասին խոսենք այդ մարդկանց հետ, նրանք կպատասխանեն. «Դա չի կարող սխալ լինել, որովհետև Աստծո անունով է»: Ո՛չ, երբեք: Միայն այն ինչ Հիսուսի Անունով է արվում, իսկապես Աստծո Անունով է: Բոլոր ուրիշ բաները սատանայից են, որն այս աշխարհի աստվածն է: Մեր Տերը ոչ մի գործ չունի այնպիսի չար զբաղմունքների հետ, ինչպիսիք են սպիրիտիզմը, խաղաթղթերով գուշակությունը, հմայությունը, ծեռնագուշակությունը: Աստծո Խոսքում դրանք արգելված են: Բայց քանի որ դրանք կատարվում են կրոնի քողի տակ, այդ ֆորմուլայով, մարդիկ մոլորվում են: Ի՞նչ ընդհանուր բան կա օկուլտիզմի, սպիրիտիզմի և Աստծո Խոսքում պատվիրված ճշմարիտ գործողության միջև: Այդ երբևանի՞ց են Աստծո ծառաները և սատանայի գործիքները ասում նույն բանը: Երբևանի՞ց է սատանայի թագավորությունը հայտնվում Աստծո թագավորության մեջ: Բոլորը պետք է հարց տան իրենց. արդյո՞ք նույնն է այն, երբ երկուսով նույն բանն են անում: Ոմանք զարմանում են, թերևս նույնիսկ ապշում, երբ տեսնում են, որ այդ ֆորմուլան օգտագործող մարդիկ այդպիսի բաներ են անում:

Բայց երբ նույն ֆորմուլան է օգտագործվում այսպես կոչված «մկրտության» և այլ կրոնական գործերի համար, նրանք դա նորմալ են համարում: Նոր Կտակարանում, այն ամենը, ինչ ստանում ենք Աստծուց և այն ամենը, ինչ տեղի է ունենում, կատարվում է Աստծո զորությամբ, Հիսուսի Անունով: Դրա համար Կողոս.3:17 համարում կարդում ենք. «Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Հիսուսի Անունով արեք»:

Մենք գիտենք, որ ոչ մի մարգարե կամ առաքյալ երբևէ չի օգտագործել որևէ ֆորմուլա, այլ Անունը, որի մասին խոսեց Փրկիչը մկրտության վերաբերյալ: «Աստված և մարդկության համար Նրա

ծրագիրը» վերնագրով իմ գրքույկում հստակ ցույց է տրված, որ միակ ճշմարիտ Աստված հայտնվեց որպես Չայր, Որդի և Սուրբ Յոզի, մեկ Անունով, որն է Տեր Հիսուս Քրիստոս: Մատթ.28:19 համարը բացարձակ ճշմարտություն է, ինչպես նաև Գործք 2:38 համարը և բոլոր մյուս համարները: Մենք միայն պետք է ճիշտ հասկանանք Աստծո խոսքը: Սկզբից ի վեր սատանան չարաշահել և սխալ է մեկնաբանել Աստծո խոսքը: Նա հաջողությամբ մոլորեցրեց մարդկանց ամենակրոնական ձևով՝ սխալ մկրտության միջոցով: Դա իսկապես մոլորություն է: Երբ նա եկավ Տիրոջ մոտ, ասաց. «Գրված է»: Բայց Տերը պատասխանեց.«Գրված է նաև...»: Պարզապես սատանան վերցնում էր սուրբգրային համարները կոնտեքստից և սխալ օգտագործում: Նույնը կատարվում է սովորեցնելու և մկրտելու պատվերի վերաբերյալ: Եվ սատանան կուրացրեց մարդկանց, որպեսզի նրանք չտեսնեն Աստծո փառքը հանձին Հիսուս Քրիստոսի: (Բ Կորնթ.4:4-6) Այն Անունը, որի մասին Փրկիչը խոսեց, ծածկված է մնում նրանց համար:

Ողջ քրիստոնեական աշխարհը պահվում է խավարի և անգիտության մեջ: Որտե՞ղ կարելի է այսօր գտնել սուրբգրային հավատք: Ո՞վ ուշադրություն կդարձնի Հայտն.18:4 համարի կանչին՝ դուրս գալ այս ժամանակի կրոնական Բաբելոնից: Ո՞վ ունի աչքեր՝ տեսնելու, ականջ՝ լսելու և սիրտ՝ հասկանալու համար: Ո՞վ կարող է տարբերել և զանազանել Աստծո ճշմարիտ խոսքը բոլոր մարդկային մեկնաբանություններից: Աստված միշտ լույսը բաժանում է խավարից: Ո՞վ ունի քաջություն խրատ առնելու, հավատալու, կատարելու այն, ինչ ասում է Աստծո խոսքը: Բոլոր հոգևոր բաները հնարավոր չէ սովորեցնել մարմնի և արյան միջոցով: Մեկը չի կարող մյուսին սովորեցնել: Ամեն մարդ անձամբ պատասխանատու է Աստծո առաջ և պետք է ընդունի իր սեփական որոշումը:

Վերջապես, հորդորանքի մի խոսք: Բոլոր նրանք, ովքեր ուզում են Աստծո փառքի մեջ լինել, պետք է իմանան հետևյալը. Աստված ներողամիտ է եղել անգիտության ժամանակներում, բայց այժմ Նա հայտնում է Իր կատարյալ կամքը Իր կատարյալ խոսքի միջոցով: Նա սպասում է, որ բոլորը հավատան Իրեն և գործեն Իր խոսքի համաձայն: Մենք պետք է թողնենք բոլոր ոչ սուրբգրային ուսմունքները, եթե նույնիսկ կորցնենք մեր ժողովրդականությունը և մեր ընկերներին: Մենք պետք է կամենանք վերադառնալ Աստվածաշնչի սկզբնական ուսմունքին, օրինակին և գործունեությանը:

Գործք 3-րդ գլխում կարդում ենք, որ Աստված խոստացել է ուղարկել

հանգստյան ժամանակներ (անգլերենում՝ նորոգման,) և որ Քրիստոսը պետք է մնա երկնքում մինչև բոլոր բաների վերականգնումը: 19-21 համարներում կարդում ենք. «...որպեսզի Տիրոջ երեսից հանգստյան ժամանակները զան և Նա ուղարկի նախապես ձեզ համար քարոզված Հիսուս Քրիստոսին, որին երկինքը պետք է ընդունի, մինչև այն բաների հաստատվելու ժամանակները, որոնց մասին Աստված խոսեց Իր սուրբ մարգարեների բերանով սկզբից ի վեր»: Այստեղ շատ պարզ է ասվում, որ Քրիստոսը մնում է փառքի մեջ մինչև զան հանգստյան ժամանակները (անգլերենում՝ նորոգման) և ամեն բան վերականգնվի: Պարզ խոսքերով՝ դա նշանակում է, որ հիմա՝ վերջին ժամանակներում, Քրիստոսի երկրորդ գալստից առաջ, կենդանի Աստծո եկեղեցուն ամեն բան պետք է վերադառնա իր սկզբնական վիճակին:

Բոլոր քրիստոնյաները, ովքեր հավատում են Քրիստոսի երկրորդ գալստյանը, քարոզներ են լսել այդ թեմայի վերաբերյալ: Իրոք, շատերը իսկապես ակնկալում են, որ Քրիստոսի վերադարձը շատ մոտ է: Ուրեմն ինչու՞ չեն հասկանում, որ սա այն ժամանակն է, որում Աստված կամենում է վերականգնել ամեն բան և տալ հանգստյան ժամանակներ՝ Իր ներկայության մեջ: Մեր Տերը և Փրկիչը միայն մեկ հետաքրքրություն ունի և դա Իր մտահոգությունն է Իր ժողովրդի հանդեպ, փրկվածների հանդեպ, որոնք կազմում են Քրիստոսի Մարմինը: Հիսուս Քրիստոսի եկեղեցին պետք է հիմնված լինի Աստծո Խոսքի վրա: Աստվածաշնչային մկրտությունը, ինչպես նաև մյուս ուսմունքները և գործերը, որոնք կիրառվում էին առաքյալների կողմից, վերանորոգման մաս են կազմում: Պողոսը գրում է Եփես.2:20 համարում. «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունաքարը Քրիստոսն է»: Տերը կկառուցի Իր եկեղեցին մինչև նա կատարյալ դառնա, և այն ժամանակ Ինքը կվերադառնա նրան տուն տանելու: Բայց նախ պետք է մենք վերադառնանք նախնական ուսմունքներին և գործերին: Այնժամ Տերը կզա և մեզ կտանի Իր փառքի մեջ: Մկրտության վերաբերյալ այս բացատրությանը ոչ ոք չպետք է թեթևամտորեն վերաբերվի: Եթե Աստված ողորմած է մեր հանդեպ, մենք անհրաժեշտ կհամարենք հարմարվել այն ամենին, ինչ Աստված ասում է Իր Խոսքում և սիրով կփափագենք մկրտվել Տեր Հիսուսի Անունով: Այսպիսով, մենք կտորում ենք այն հին լուծը, որը դրված էր բոլոր հարանվանությունների վրա և հոգեպես կուրացրել էր նրանց, ովքեր մկրտվել են եռամիասնական ֆորմուլայով: Ով Աստծուց է, կլսի և կգործի Աստծո Խոսքի համաձայն: Երանի նրան, ով այս խոսքերը լուրջ է ընդունում, որովհետև դա անհրաժեշտ է, որպեսզի պատրաստ

լինենք, երբ Տերը գա: Նա խոստացել է և կկատարի իր խոստումը:

Տ Ե Ր Ո Ն Ա Կ Ա Ն Ը Ն Թ Ր Ի Ք Ը

Մինչև Տերունական Ընթրիքի մասին խոսելը պետք է քննարկենք Ջատկի թեման: Հին Կտակարանի բնական երևույթները Նոր Կտակարանի գերբնական իրականության մեծ միանումն համոզի սահմանում են դրա նախանշանները: Նույնիսկ այսօր Ջատկի կը հրեա ժողովրդի ամենակարևոր տոներից մեկն է: Տերն իսրայելացիներին ասաց, որ ամեն ընտանիք պետք է գառնուկ մորթի, միսը ուտի և արյունը քսի դռան աջ և ձախ կողմերին և վերևում: (Ելից 12) Շենքին չպետք է արյուն քսեին, որպեսզի ոչ ոք դրա վրայով չքայլեր: Եբրայերեն «փեսախ» բառը նշանակում է խնայել կամ մոտով անցնել: Երբ դատաստանի հրեշտակը սպանեց եգիպտացիների բոլոր առաջնեկներին, Իսրայելի առաջնեկներին խնայեց, քանզի Տերն ասել էր. «Արյունը ձեր տների վրա նշանի համար լինի, որպեսզի, երբ արյունը տեսնեմ, ձեր մոտով անցնեմ և հարվածը ձեզ վրա չգա՝ ձեզ կորցնելու համար, երբ Եգիպտոսի երկիրը հարվածեմ»: (Ելից 12:13)

Այդ գառնուկների արյունը թափվել էր նրանց մեղքերի թողության համար: Դա նաև նրանց ապահովության նշանն էր դատաստանի ժամանակ: Եգիպտացիների բոլոր տներում լալիս և ողբում էին, որովհետև բոլոր տներում մեռած մարդ կար, բայց իսրայելացիների տներում կատարյալ ապահովություն էր: Աստծո բարկությունը չէր կարող մտնել այնտեղ, որովհետև նրանց փոխարեն գառնուկ էր մորթվել: Նրանք կարող էին ազատ դուրս գալ: Նույնը վերաբերում է փրկագնվածներին: Նրանց չեն դիպչի Աստծո ահավոր դատաստանները, երբ Նրա բարկությունը հասնի անհավատներին: Աստծո Գառան արյունը մեր մեղքերի քավությունն է և մեր ապահովությունը: Պողոսը գրում է եկեղեցուն. «...Որովհետև Քրիստոսը՝ մեր Ջատկի, մեզ համար զոհվեց»: (Ա Կորնթ. 5:7) Նաև

Եսայի մարգարեն ասում է. «...մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ...»: (Ես.53:5) Նրա մահով մենք հաշտվեցինք, Նրա արյունով քավություն եղավ մեր մեղքերին և ստացանք հավիտենական կյանք:

Տերը Մովսեսի միջոցով պատվիրեց, որ Ջատկի այս օրը, որ ցույց էր տալիս նաև Եգիպտոսից դուրս գալը, պետք է նշվի հատուկ ձևով: «Այն օրը ձեզ հիշատակի համար լինի և այն նշեք որպես Տիրոջ տոն. ձեր սերնդի մեջ հավիտենական կանոնով տոն պահեք այն»: (Ելից 12:14) 26-27 համարներում դա նորից հաստատվում է. «Եթե ձեր որդիները հարցնեն, թե ինչ էք ուզում ասել այս տոնով, պատասխանեք. «Սա Տիրոջ Ջատկի զոհն է, քանզի Եգիպտոսում Իսրայելի որդիների տների

մոտով անցավ , երբ եզիպտացիներին զարկեց, մեր տները խնայեց»:

Նույն ձևով, Տերունական Ընթրիքը հիշեցնում է մեր փրկագնումը: Դա նրա համար է, որպեսզի կարողանանք հաստատուն մնալ, մինչև Տերը գա: (1Կորնթ.11:26) Մի կողմից մենք նայում ենք ետ՝ հաշտության մեծ օրվան, մյուս կողմից նայում ենք առաջ՝ այն փառավոր օրվան, երբ բոլոր փրկագնվածները կհանդիպեն Փրկչին փառավոր մեծ ընթրիքի ժամանակ: Տերունական Ընթրիքը սկսելիս Նա ասաց.«... սա արեք ինձ հիշելու համար»: (Ղուկաս 22:19)

Մասնակցելով Տերունական Ընթրիքին՝ հիշում ենք փրկագնման ավարտված գործը և ամեն անգամ նորից մասնակցելով, հասկանում ենք, որ փրկվեցինք,

երբ Քրիստոսը՝ մեր Փրկիչը, Իր արյունը թափեց խաչի վրա: Գառնուկը, որ մորթվում էր, որպես փոխարինող, պետք է ուտեին անխմոր հացով: Այդ մասին կարդում ենք. «Յոթ օր բաղարջ պիտի ուտեք. առաջին օրը պետք է ձեր տներից դուրս գցեք թխմորը, քանզի առաջին օրից մինչև յոթերորդ օրը ով որ խմորված հաց ուտի, պետք է կորսվի Իսրայելի միջից»: (Ելից12:15) Այս պատվերը պետք է պահվեր, և նրանք պետք է այդ անեին ճշգրիտ ձևով:

Չատկի արարողությունը առաջին անգամ կատարվեց անմիջապես նրանց ազատագրումից և Եզիպտոսից դուրս գալուց առաջ: Տերունական Ընթրիքը առաջին անգամ կատարվեց Չատկի ժամանակ, որը Հիսուսը տոնում էր Իր աշակերտների հետ, անմիջապես Իր խաչվելուց առաջ, որով էլ եկեղեցին փրկագնվեց: «Եվ երբ ժամը հասավ, Նա սեղան նստեց, տասներկու առաքյալներն էլ Նրա հետ: Նրանց ասաց.«Շատ ցանկացա Իմ չարչարվելուց առաջ այս Չատիկը ձեզ հետ ուտել: Որովհետև ասում են ձեզ, որ սրանից այլևս երբեք չեմ ուտելու մինչև որ կատարվի Աստծո արքայության մեջ»: (Ղուկաս 22:14-16) 7-13 համարներում ասվում է, որ մեր Տերը ուղարկեց Պետրոսին և Հովհաննեսին՝ տալով հետևյալ պատվերը. «Գնացեք, մեզ համար Չատիկը պատրաստեցեք, որպեսզի ուտենք»: Երբ գնացին տանտիրոջ տունը, նրան ասացին.«Վարդապետը քեզ ասում է՝ «Որտե՞ղ է այն օթևանը, ուր ես Իմ աշակերտների հետ պետք է Չատիկն ուտեմ»: Մատթ.26:26 համարում կարդում ենք.«Եվ նրանք դեռ ուտում էին, Հիսուսը հացն առավ, ու օրհնելով կտրեց, աշակերտներին տվեց ու ասաց.«Առեք, կերեք, այս է Իմ մարմինը»: Տերը ֆիզիկապես ներկա էր, երբ վերցրեց Իր ձեռքերի մեջ հացը և ասաց այդ խոսքերը: Իր ձեռքերում բառացիորեն Իր մարմինը չէր, այլ անխմոր հացը որը թխվել և պատրաստվել էր ըստ Չատկի համար

տրված կարգադրության: Որտեղ էլ Տերունական Ընթրիքը տոնվի աստվածաշնչային ձևով, հացը պետք է թխվի առանց թթամորի: Այդ հացը օրհնվում է աղոթքով: Հետո մանր կտորներով կտրվում է, և բոլորը մասնակցում և վերցնում են կտրված հացից: Երբ հավատացյալները ընդունում են հացը, նրանք ճանաչում և գիտակցում են, որ Քրիստոսի մարմինը ծեծվել և վիրավորվել է իրենց համար: Նրանք գիտեն, որ Նա խաչվել է իրենց համար: Նաև ընդունում են, որ իրենք գնվել են Նրա թափած արյունով: Նրանք հիմա Աստծո սեփականությունն են և կազմում են Նրա մարմինը: Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև ես Տիրոջից եմ ընդունել այն, ինչ ձեզ եմ ավանդել. որ Տեր Հիսուսն այն գիշերը, երբ մատնվեց, հացը վերցրեց և զոհանալուց հետո կտրեց ու ասաց. «Առեք, կերեք, այս է Իմ մարմինը, որ ձեզ համար է կտրվում. (խնդրեմ, ուշադրություն դարձրեք «ձեզ համար» բառերին) այս արեք Իմ հիշատակի համար: Այդպես էլ ընթրիքն ուսելուց հետո բաժակը վերցրեց ու ասաց. «Այս բաժակը նոր ուխտն է Իմ արյունով. քանի անգամ, որ խմեք, այս արեք Իմ հիշատակի համար: Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահն եք պատմում, մինչև որ Նա գա»:(Ա Կորնթ.11:23-26) Պողոսը կարող էր ասել. «Որովհետև ես Տիրոջից ընդունեցի...»: Տերն Ինքն էր սովորեցրել նրան, թե ինչպես պետք է կատարել Տերունական Ընթրիքը: Նա վկայակոչում է Տիրոջ Խոսքերը, երբ պատմում է Տերունական Ընթրիքի մասին, ինչպես գրված է ավետարաններում: Ղուկաս 22:20 համարում ասվում է. «Այդպես էլ ընթրիքից հետո բաժակը վերցրեց ու ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է Իմ արյունով, որ ձեզ համար թափվում է»: Գավաթի մեջ գինի էր: Նոր ուխտի արյունը, որ պիտի թափվեր, դեռ Իր երակներում էր և չէր թափվել խաչի վրա: Ոչ էլ նշվում է, որ այդ երկու նյութերը փոխվում և դառնում են Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Ո՛չ մեր Տերը, ո՛չ էլ Իր աշակերտները արյուն չէին խմում: Փաստորեն, մեր Տերն ասաց հետևյալ խոսքերը. «Այլևս որթատունկի բերքից չեմ խմի, մինչև որ Աստծո թագավորությունը չգա»: Հացը և գինին խորհրդանշում են Քրիստոսի մարմինն ու արյունը, բայց մնում են հաց և գինի: Նա խոսում էր նոր ուխտի և Նոր Կտակարանի մասին, որը պետք է ուժի մեջ մտներ Իր մահվան պահից:

Բացի այդ, Քրիստոսը նորից չի զոհաբերվում ամեն անգամ հաղորդություն կատարելիս: Ըստ Եբր.10:12 համարի Նա մեկ անգամ զոհաբերվեց և մշտնջենապես նստեց Աստծո աջ կողմը: Տերունական Ընթրիքին մասնակցելը հավատացյալներին տալիս է հատուկ հնարավորություն ամեն անգամ Աստծո առաջ կանգնելիս հասկանալ, թե իրականում ինչ կատարվեց, երբ զոհաբերվեց Քրիստոսի մարմինը

և թափվեց Նրա սուրբ արյունը: Ամեն Աստծո զավակ պետք է քննի իր սիրտը մինչև Տերունական Ընթրիքին մասնակցելը: Երբ գտնում ենք մի բան, որ հաճելի չէ Աստծուն, խոստովանում ենք և թողնում խորանի վրա՝ հավատալով, որ արյունը ամեն բան սրբացրեց: Մենք ներքին ցավով ենք զգում Տիրոջ չարչարանքները և խաչի վրա Նրա մահը, որովհետև դա մեզ համար էր: Դա խոնարհեցնում է մեզ, հենց որ մտածում ենք, թե ինչ մեծ գին է մեր փրկության համար վճարել մեր սիրելի Փրկիչը: Ըստ Սուրբ Գրքի, Նա իր արյունով մտավ երկնային սրբարանը և այն դրեց շնորհաց աթոռին, որով էլ հավիտենական փրկություն բերեց: (Եբր.9:12)Ուխտը հաստատվեց այն պահին, երբ արյունը թափվեց խաչի վրա: Սկսվեց փրկության օրը: Կրկին մենք պետք է համենատենք Հին և Նոր Կտակարանները: Ելից 24:6-8 համարներում գրված է Ուխտի գրքի, Ուխտի արյան մասին, որը սրսկվում էր Ուխտի ժողովրդի վրա: Հիսուսն ասաց. «Որովհետև սա է Իմ արյունը նոր ուխտի, որ պիտի թափվի շատերի մեղքերի թողության համար»:(Մատթ.26:28) Այդ ասելով Նա նկատի ուներ իր անբիծ, սուրբ և աստվածային արյունը, որը պետք է թափվեր, ոչ թե գինին, որ գավաթի մեջ էր: Նա հաստատեց Նոր Կտակարանը: Մենք Նոր Ուխտի ժողովուրդն ենք և ուղղակի հաղորդակցություն ունենք Նոր Ուխտի գրքի հետ: Պողոսը գրում է.«Օրհնության այն բաժակը, որ օրհնում ենք, չէ՞ որ հաղորդություն է Քրիստոսի արյան: Այն հացը, որ կտրում ենք, չէ՞ որ հաղորդություն է Քրիստոսի մարմնին: Որովհետև մենք շատերս մեկ հաց, մեկ մարմին ենք, քանի որ ամենքս այն մեկ հացից ենք ճաշակում»:(Ա Կորնթ.10:16-17) Այս երկու համարները շատ հազվադեպ են օգտագործվում, շատերը գուցե նույնիսկ չգիտեն, որ դրանք գոյություն ունեն: Բայց դրանք արտահայտում են Տերունական Ընթրիքի ամենախոր ճշմարտությունը: Դրանք ցույց են տալիս մեզ՝ եկեղեցուն, որպես Մարմին, որպես սուրբերի կենդանի հաղորդակցություն, որոնք հավաքվում են Հիսուսի անունով: Նրանք արդյունքն են Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի փրկարար գործի, ով իր մարմնով զոհաբերվեց մեզ համար:

Հացը, որ օգտագործում են Տերունական Ընթրիքի ժամանակ, մի կողմից խոսում է խաչյալ Քրիստոսի Մարմնի մասին, մյուս կողմից, վերաբերում է եկեղեցուն, որը կազմում է շատ անդամներից բաղկացած մարմնի միությունը: Քրիստոսի Մարմինը ծեծվեց և վիրավորվեց, բայց չկոտրվեց, ինչպես գրված է. «Որովհետև այս բաները տեղի ունեցան, որպեսզի գրվածը կատարվի՝«Նրա ոսկորը պիտի չփշրվի»: Եվ դարձյալ մեկ ուրիշ գրվածք ասում է.«Կնայեն Նրան, ուն խոցեցին» (Հովհ.19:36-37): Մենք այստեղ գործ ունենք

Քրիստոսի և Իր եկեղեցու խորհրդի հետ: Փրկագնման միջոցով եկեղեցին դարձավ Նրա մարմինը. խոսքը բոլոր նրանց մասին է, ովքեր հաշտվեցին, փրկվեցին և ստացան մեղքերի թողություն: Պողոսը գրում է. «Ինչպես, որ մարմինը մեկ է ու շատ անդամներ ունի, և մեկ մարմնի անդամները շատ լինելով, մարմինը մեկ է, այնպես էլ Քրիստոսը»: (Ա Կորնթ.12:12) Այստեղ մեծ խորհուրդ կա: Քրիստոսը հաղորդակցվում է միայն Իր մարմնի անդամների հետ: Նրա մասին մենք կարդում ենք. «Եվ Նա է Մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը: (Կողոս.1:18)

Ինչպես մեր բնական մարմինն է մեկ միասնություն, բայց բաղկացած է շատ անդամներից, որոնք միացած են և կառավարվում են գլխի միջոցով, այնպես էլ Քրիստոսի Մարմնի բոլոր անդամները: «Որովհետև մենք ամենքս էլ մեկ Յոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու համար, թե հրեաներ, թե հույներ, թե ազատներ, ամենքս էլ մեկ Յոգուց խմեցինք»: (Ա Կորնթ.12:13) Ուշադրության արժանի է հետևյալ փաստը. ոչ թե ջրի, այլ Յոգու միջոցով է Նա գործում բոլոր նրանց մեջ, ովքեր հավատում են Յիսուս Քրիստոսին և մկրտված են աստվածաշնչային ձևով: Դետո նրանք Յոգու միջոցով դրվում են Քրիստոսի Մարմնի մեջ: Բոլոր փրկվածները, ովքեր այդ աստվածային միության մեջ են, կազմում են Տիրոջ Մարմինը և ճանաչում են Նրան, որպես Գլուխ և ամեն ինչում հնազանդվում են Նրան: Նրանք զգում են այն, ինչ զգում է յուրաքանչյուր անդամը, ուրախանում են ուրախացողների հետ և տանջվում են տանջվողների հետ, որովհետև Ա Կորնթ.12:26 համարն ասում է. «Եվ եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ Նրա հետ ցավում են, ու եթե մի անդամը փառավորվում է, բոլոր անդամներն էլ Նրա հետ ուրախանում են»: Եթե դա ձեզ չի վերաբերում, ուրեմն մտածեք Քրիստոսի հետ ձեր հարաբերության մասին:

Այս կապակցությամբ չենք կարող քննարկել Քրիստոսի Մարմնի անդամների զանազան ծառայությունները: Բայց Պողոսն ասում է հետևյալ խոսքերը. «Բայց հիմա Աստված անդամները, նրանցից ամեն մեկը դրեց մարմնի մեջ, ինչպես կամեցավ: Եվ եթե ամբողջը մեկ անդամ լիներ, մարմինը որտե՞ղ կլիներ: Բայց հիմա անդամները շատ են, իսկ մարմինը՝ մեկ»: (Ա Կորնթ.12:18-20) 27-րդ համարում նա այդ ամենը ամփոփում է հետևյալ խոսքերով. «Արդ, դուք Քրիստոսի Մարմինն եք ու մեկ առ մեկ՝ Իր անդամները»:

Առաքյալը զգուշացնում է հավատացյալներին քննել իրենց սրտերը Տերունական Ընթրիքին մասնակցելուց առաջ. «Ուրեմն մարդ թող իր անձը փորձի ու հետո այն հացից ուտի և այն բաժակից

խմի: Որովհետև անարժանաբար ուտողն ու խմողը իր անձի համար դատապարտություն է ուտում և խմում, որ չի որոշում Տիրոջ մարմինը: (Ա Կորնթ.11:28-29)

Բոլոր նրանք, ովքեր պատկանում են Քրիստոսի Մարմնին, ընդունում են, որ Նա Իր վրա վերցրեց մեր դատապարտությունը, մեր մեղքը, ամեն բան վերցրեց Իր վրա: Նրանք, ովքեր հավատում են այդ կատարյալ փրկությանը և մեղքերի թողությանը, նույնպես ներում են միմյանց, ինչպես Աստված ներեց Քրիստոսով: Ոչ ոք հաշվի չի առնում որևէ բան կամ հիշաչար լինում ուրիշ անդամի նկատմամբ: Մենք պետք է որոշենք Տիրոջ մարմնի իմաստը: Այս դեպքում դա վերաբերում է բոլոր անդամներին, ովքեր լիովին փրկված են, արդարացված, սրբացած և մասնիկն են Քրիստոսի կատարյալ սուրբ Մարմնի, որն անբիծ է և անարատ: Նրանք իրար տեսնում են Քրիստոսի մեջ և Քրիստոսի միջոցով, նրանք միմյանց տեսնում են այնպես, ինչպես Աստված է տեսնում իրենց՝ անմեղ և կատարյալ: Նրանք իրար ըստ Մարմնի չեն ճանաչում, այլ Ռոգով:

Ինչպես հացն է պատրաստվում առանց թթխմորի, այնպես էլ եկեղեցին պետք է զերծ լինի այն ամենից, ինչ իր մեջ պարունակում է ավանդական, ոչ սուրբգրային ուսմունք: Տեր Ռիսուսն օգտագործում էր «թթխմոր» տերմինը՝ ցույց տալու համար Իր ժամանակի կրոնական առաջնորդների սխալ վարդապետությունը: Նա ասաց.«Ինչպե՞ս չէք իմանում, որ հացի համար ձեզ չսասացի, որ փարիսեցիների և սադուկեցիների խմորից զգուշանաք»: Այն ժամանակ հասկացան, որ չսասացի հացի խմորից զգուշանալ, այլ փարիսեցիների և սադուկեցիների ուսմունքից»: (Մատթ.16:11-12) Պողոսը նույնպես խոսում է թթխմորի մասին և այդ բառն օգտագործում հոգևոր ոլորտում: Նա գրում է Ա Կորնթ. 5:6-8 համարներում.« Չգիտե՞ք, որ մի փոքր խմորն ամբողջ զանգվածն է խմորում: Հին խմորը դեն գցեք, որ նոր զանգված լինեք, ինչպես որ անխմոր եք. որովհետև մեր Չատիկը՝ Քրիստոսը, մեզ համար մորթվեց: Ուստի ոչ թե հին խմորով տոն կատարենք, ոչ էլ չարության և անզգամության խմորով, այլ մաքրության և ճշմարտության անխմոր հացով»: Ամեն ոք, ով մասնակցում է Տերունական Ընթրիքին, Աստծո և մարդկանց առաջ վկայում է, որ ինքն ազատ է բոլոր այստեղ նշված բաներից և հաստատված է նոր կյանքի և ճշմարտության մեջ: Դա պետք է իրոք կատարվի, և կյանքը պետք է բերի այդ վկայության պտուղները: Միայն բառերը բավական չեն: Պետք է փորձառություն լինի: Ռոգով. 11-րդ գլխում Պողոս առաքյալը խոսում է այն մարդկանց կատարյալ արդարացման և սրբացման մասին, ովքեր պատկանում են Իր եկեղեցուն: Այդ բաները մատչելի դարձան, երբ Քրիստոսը

մեռավ խաչի վրա: Առաքյալը գրում է. «Եվ եթե երեխայրին սուրբ է, ապա զանգվածն էլ, եթե արմատը սուրբ է, ապա ճյուղերն էլ»; (հ.16) Քրիստոսը երեխայրին է, և Նրան պատկանողներն էլ նույնի մաս են կազմում: Նա առաջնեկն է, և բոլոր նրանք, ովքեր ծնվել են Աստծո նույն սերմից, կազմում են առաջնեկների խումբը: Նա նոր որթատունկն է, իսկ իսկական հավատացյալները պտղատու ճյուղերն են, ըստ Հովհ.15-րդ գլխի: Ինչպես բնության մեջ ճյուղերը կյանք են ստանում այն հյութի միջոցով, որը արմատներից գալիս է դեպի որթատունկ, բայց հետո բերում են որթատունկի պտուղը, այնպես էլ բոլոր նրանք, ովքեր ծնված են Աստծուց: Նրանք չեն միանում ինչ-որ բանի, այլ դրա արդյունքն են և կրում են Աստծո կյանքը իրենց մեջ, ուստի և հաղորդ են լինում աստվածային բնությանը: Այդ կապակցությամբ Պետրոսը գրում է. «Եվ այդ բանի համար ամեն ջանք դնելով ձեր հավատքի վրա ավելացրեք առաքինություն, առաքինության վրա՝ գիտություն, և գիտության վրա՝ ժուժկալություն, ժուժկալության վրա՝ համբերություն, համբերության վրա՝ աստվածապաշտություն, աստվածապաշտության վրա՝ եղբայրասիրություն, եղբայրասիրության վրա՝ սեր»: (Բ Պետր.1:5-7) Այստեղ գործ չունենք միայն վարդապետության կամ գիտության հետ, այլ դա փրկագնման գործի աստվածային արդյունքը և պտուղն է ճշմարիտ հավատացյալի մեջ: Պահանջը

հետևյալն է. «Այլ դուք էլ ձեր ամբողջ վարմունքի մեջ ձեզ կանչող Սուրբի պես սուրբ եղեք: Քանի որ գրված է՝«Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»: Եվ եթե Հայր եք կոչում նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն մեկի գործի համեմատ, ապա ձեր պանդխտության ժամանակը երկյուղով անցկացրեք»: (Ա Պետր.1:15-17)

Պ ա ր գ ա բ ան ու մ

Ոչ սուրբգրային ավանդույթի պատճառով շատերը հավատում են, որ այդ երկու նյութերը փոխվում են և դառնում Քրիստոսի արյունն ու մարմինը: Եթե դա իրոք այդպես լիներ, սարսափելի կլիներ: Ով կարող է պատկերացնել, որ կարելի է ուտել սուրբ Մարմինը և խմել սուրբ Արյունը և հետո մարսել դրանք բնական ճանապարհով: Միայն այդպիսի բան մտածելը հայհոյություն է: Դա կատարելապես բացառվում է:

Ինչպես հրեաները ճիշտ չհասկացան Տիրոջ խոսքերը, որովհետև չճանաչեցին դրանց հոգևոր իմաստը, այնպես էլ հիմա քրիստոնյաները

ճիշտ չեն հասկանում: Այն օրը բազմությունը կարծում էր, որ Տերը պատվիրում է գործել օրենքին հակառակ, երբ ասաց. «Իմ մարմինը ուտողը և Իմ արյունը խմողը հավիտենական կյանք ունի»: (Յովհ.6:54) Յուրաքանչյուր հրեա գիտեր, թե ինչ է գրված Ղևտ.17:10-12 համարներում. «Եթե Իսրայելի տնից կամ ձեր մեջ պանդխտացած օտարականներից մի մարդ որևէ արյուն ուտելիս լինի, ես այն արյուն ուտող անձի դեմ պետք է լինեմ և նրան իր ժողովրդի միջից կորցնեմ»:

Որովհետև մարմնի կենդանությունը արյան մեջ է, և ես ձեզ տվեցի այն, որպեսզի սեղանի վրա ձեր հոգիների համար քավություն անեք, քանզի հոգու համար քավություն անողը արյունն է: Դրա համար Իսրայելի որդիներին ասացի. «Ձեզանից որևէ մեկը արյուն չուտի, ձեր մեջ պանդխտացած օտարականն էլ արյուն չուտի»: Այդ պատճառով հրեաները այդպես վարվեցին, երբ Հիսուսը նրանց ասաց Իր մարմինը ուտելու և Իր արյունը խմելու մասին: Այդ երկու բնական խորհրդապատկերները ցույց են տալիս հոգևորը: Աստված չէր կարող այդքան խիստ ձևով արգելել արյուն խմելը և հետո նույնիսկ պահանջել Իր հետևորդներից այդ անել: Ամեն ոք, ով վերցնում է հաց ու զինին, վկայում է, որ ինքը գնված է մարմնի զոհաբերմամբ և հեղված արյունով: Դա այդ հրաշալի իրադարձության հիշատակի համար է: Փրկագնումը և թողությունը չենք ստանում Տերունական Ընթրիքին մասնակցելու շնորհիվ. դա կատարվեց Գողգոթայում: Տերունական Ընթրիքի միջոցով պարզապես հիշում ենք այն, ինչ արդեն կատարվել է:

Յովհ. 6-րդ գլխում կարդում ենք հացի բազմացման հրաշքի մասին, երբ հազարավորները կերակրվեցին: Հաջորդ օրը մարդիկ եկան Տիրոջ մոտ և Նա ասաց իրենց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. դուք Ինձ ոչ թե նրա համար եք փնտրում, որ հրաշքներ տեսաք, այլ որովհետև հացից կերաք և կշտացաք: Աշխատեցեք ոչ թե կորստական կերակուրի, այլ այն կերակուրի համար, որ մնացող է հավիտենական կյանքի մեջ, որ Մարդու Որդին կտա ձեզ»: (Յովհ.6:26-27) Նա խոսեց հացի մասին, կերակուրի մասին, հավիտենական կյանքի մասին, և բազմությունը հիշեց, թե ինչպես Իսրայելի որդիները կերակրվեցին Հիմ

Կտակարանում: Դրա համար էլ նրանք գոռացին. «Մեր հայրերն անապատում մանանան կերան, ինչպես որ գրված է՝ «Երկնքից նրանց հաց տվեց»:(Ի.31) Հիսուսն էլ պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. երկնքից այն հացը ձեզ ոչ թե Մովսեսն է տվել, այլ Իմ Հայրն է երկնքից ճշմարիտ հացը տալիս ձեզ: Որովհետև Աստծո հացը

այն է, որ երկնքից է իջնում և կյանք է տալիս աշխարհին»: Նրանք էլ ասացին.«Տեր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը: Հիսուսն էլ նրանց ասաց.«Ես եմ Կյանքի Հացը, ինձ մոտ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի»: (Հովհ6: 32-35) Դա շատ պարզ պատասխան է: Կարիք չկա հատուկ մեկնաբանության: Ինչպես բնական հաց ենք ուտում ֆիզիկապես ապրելու համար, այնպես էլ պետք է պատկանենք Նրան, ով Կյանքի Հացն է, եթե ուզում ենք հավիտյան ապրել:

Տեր Հիսուսը մեզ ներկայանում է, որպես կենդանի հաց, որը իջնում է երկնքից և աշխարհին տալիս է հավիտենական և աստվածային կյանք: Նա այդ միտքը շեշտում է հետևյալ համարներում. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ.«Ինձ հավատացողը հավիտենական կյանք ունի: Ես եմ Կյանքի Հացը: Ձեր հայրերը մանանան անապատում կերան ու մեռան: Սա է այն հացը, որ երկնքից է իջնում, ու եթե մեկը սրանից ուտի, չի մեռնի: Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել: Եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և այն հացը, որ Ես կտամ , Իմ մարմինն է, որ Ես աշխարհի կյանքի համար կտամ»: (հհ 47-51)

Դա է Ավետարանը: Նա զոհաբերվել է Իր մարմնով , որպեսզի մենք ազատվենք մեր մարմնից և ստանանք հավիտենական կյանք: Երկնային հացը չի թխվում երկրի վրա, և աստվածային կերակուրը չի ստեղծվում մարդու ձեռքով: Տերը զոհաբերվեց: Նա խաչվեց, որպեսզի բոլոր նրանք, ովքեր հավատում են փրկագնման կատարյալ գործին, ստանան հավիտենական կյանք, նաև կերակրվեն հոգևորապես: Նա է կյանքի հացը: Մենք Հոգով ենք Նրա հետ հաղորդակցվում: Քանի որ Նա դարձավ մեզանից մեկը, մենք վերադարձվել ենք Իր թագավորություն և դարձել Իր մասնիկը:

Հրեաները վիճում էին իրար հետ և հարցնում.«Ինչպե՞ս կարող է Իր մարմինը մեզ տալ ՚ուտելու»: (հ 53) Այսօր էլ քրիստոնյաները վիճում են՝ Տիրոջ ընթրիքը պարզությամբ և գոհունակ սրտով ընդունելու փոխարեն:

Մենք տեսնում են Աստծո Գառին, որը վերցրեց մեր մեղքերը և թափեց Իր արյունը մեզ համար: Արյունը մեր քավությունն էր, ուստի Նա պետք է զոհաբերվեր զոհասեղանի վրա:

Քրիստոսի մեջ էր Աստծո կյանքը, Իր մահով այդ կյանքը ազատ արձակվեց և կարողացավ վերադառնալ բոլոր նրանց վրա, ովքեր գնվեցին Նրա կողմից:

Մեր Տիրոջ խոսքը ուղղված էր Իր չարչարանքներին և մահվանը:

Մենք պետք է ճանաչենք Աստծո հետ հոգևոր և աստվածային մասնակցությունը, որը մեզ տրվել է մեզ համար խաչված Հիսուս Քրիստոսի միջոցով: Վերստին ծննդյան միջոցով դառնում ենք Աստծո որդիներն ու դուստրերը: Պողոսն այսպես է գրում.«Որովհետև Նրա մարմնի անդամներն ենք, Նրա մարմնից ու ոսկորներից»: (Եփես. 5:30) Մարմնավորապես ոչ ոք մարմին չէ Իր մարմնից և ոսկոր չէ Իր ոսկորներից: Բնական կյանքում մենք բոլորս Ադամից ենք: Բայց հոգևորապես մենք մասնիկն ենք այն նոր ստեղծագործության, որը սկսեց գոյություն ունենալ Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հետ: Որպես փրկագնվածներ, մենք վերադարձվել

ենք Աստծո հետ հաղորդակցություն ունենալու համար: Մեր հոգիներում ունենք Իր կյանքը, որը հավիտենական կյանքն է: Մարմնավոր մտքի համար այս ամենը հիմարություն է, հետևաբար մարդիկ իրենց սեփական մտքերն ունեն, երբ կարդում են Աստծո Խոսքը: Հոգևոր բաները պետք է հոգևոր ձևով հասկանալ: Հիսուս Քրիստոսը ամեն ինչ է. Նա ճանապարհն է, Ճշմարտությունը, Կյանքը, Կենդանի Հացը, աշխարհի Լույսը, Հարությունը՝ ամեն ինչ է մեզ համար: Նրա միջոցով մենք նորից դարձել ենք Աստծո որդիներն ու դուստրերը: Բայց Հիսուսը երբեք չի բացատրել Խոսքը, Նա միայն ասել է այդ: Նա գործում էր Խոսքին համապատասխան, և Նրան վերաբերող ամեն բան կատարվեց: Ուստի Նա կարող էր ասել.«Իմ կերակուրն այն է, որ ես Ինձ ուղարկողի կամքը անեմ և Նրա գործը կատարեմ»: (Հովհ. 4:34)

Ամեն ոք, ով մասնակցում է Տերունական Ընթրիքին, ներքուստ պատրաստ է կատարելու Աստծո կամքը, ինչպես այն մեզ հայտնի է Իր Խոսքում: Մենք պետք է անձնական հարաբերություն ունենանք Աստծո հետ: Այդ ժամանակ կարող ենք վստահությամբ ասել.«Իմ կերակուրը ինձ փրկողի կամքը կատարելն է»: Մենք ընդունում ենք Աստծո Խոսքը և ընդունում ենք Քրիստոսին՝ երկնքից իջած կենդանի հացին: Նրա արյունը փրկեց մեզ, որովհետև թափվել էր մեր քավության համար:

Հիսուսն ասաց.«Սա է այն հացը, որ երկնքից է իջել. ոչ թե ինչպես ձեր հայրերը կերան մանանան ու մեռան, այս հացն ուտողը հավիտյան կապրի»: (Հովհ. 6:58) Այդ առանձնահատուկ խոսքերից հետո Իր աշակերտներն ասացին.«Խիստ է այդ

խոսքը, ո՞վ կարող է դա լսել» (Կ.60) Նույնիսկ Տիրոջը հետևողները ունեցան սեփական գաղափարները, երբ լսեցին Իր խոսքը:

Շատ հստակ Նա խոսեց Իր մասին որպես երկնքից իջած

հացի: Բայց տեսավ, թե որքան անօգնական էին նրանք և ասաց 63 համարում.«Չոգին է կենդանացնողը. մարմինը ոչ մի օգուտ չի տալիս: Այն խոսքը, որ ես ձեզ հետ խոսեցի, Չոգի է ու կյանք»: Միայն վերոհիշյալ խոսքերից հետո ենք ստանում լույս և հայտնություն Տիրոջ ասածների վերաբերյալ: Իր մարմինը ուտելու և արյունը խմելու վերաբերյալ Նրա խոսքերը շատերին մղեցին հեռանալու Իրենից: Դրա վերաբերյալ վեճերը շարունակվում են նույնիսկ այսօր:

Գրված է.«Դրանից հետո Նրա աշակերտներից շատերը հետ գնացին ու Նրա հետ այլևս չէին շրջում»: Այնժամ Հիսուսը հարցրեց տասներկուսին. «Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ»: Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց Նրան.«Տեր, ու՞մ մոտ պիտի գնանք. Դու հավիտենական կյանքի խոսքեր ունես: Եվ մենք հավատացինք ու ճանաչեցինք, որ Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»: (հհ. 66-69) Այս նույն վկայությունը կունենա յուրաքանչյուր ոք, ով իսկապես հետևում է Հիսուսին: Անկախ նրանից, թե հասկանում են Նրա ասածները, թե ոչ, նրանք հավատում են Նրան, վստահում են Նրան, հնազանդվում են Նրան և հետևում, իսկ հետո գալիս է այն պահը, երբ ամեն ինչ պարզ է դառնում:

Եկեք ամփոփենք այս թեմայի վերաբերյալ մտքերը. փրկագնման գործը մեկընդմիջտ կատարվեց Գողգոթայում: Նրանք, ովքեր հավատքով ընդունում են այդ, մասնակցում են Տերունական Ընթրիքին՝ հիշելու համար այդ նշանավոր օրը և Գողգոթայում կատարվածը: Ըստ մասնակիցների քանակի հաց է թխվում, անշուշտ առանց թթխմորի, ինչպես արդեն ասվեց: Հացը բարձրացնում են

Եկեղեցու առջև, աղոթում և օրհնում են Տիրոջ անունով: Հետո այն կտրվում է և բոլոր մասնակիցները ուտում են դրանից: Եթե ինչ-որ բան մնում է, մի քանիսը ուտում են մնացածը, ուստի ոչինչ չի կորչում: Հետո գավաթով գինին, որը պետք է լինի միայն կարմիր խաղողից, նույնպես բարձրացնում են եկեղեցու առաջ, աղոթում և օրհնում են Տիրոջ անունով: Բոլոր նրանք, ովքեր վերցրել են հացը, վերցնում են նաև գինին: Այդ ամենը կատարվում է ի հիշատակ մեր Տիրոջ, որը տվեց Իր մարմինը և թափեց Իր արյունը: Տերունական Ընթրիքը պետք է կատարվի այնպես, ինչպես Նա ասել է: Եթե այդպես չի արվում, ճշմարիտ ծառայությունը անմիջապես վերածվում է ինքնահնար կռապաշտության, իսկ այն, ինչ կոչվում է «հավատք», իրականում հակառակն է: Պողոսը գրում է.«Չեք կարող խմել Տիրոջ գավաթը և դևերի գավաթը, չեք կարող վայելել Տիրոջ սեղանից և դևերի սեղանից: Նախանձի՞՞ գրգռենք Տիրոջը. մի՞թե մենք Նրանից զորավոր

ենք» (Ա Կորնթ. 10:21-22) Նա պետք է որ նկատի ունենար Ղևտ. 17-րդ գլխում գրված համարը, որտեղ Աստված ասում է, թե ինչպես պետք է մատուցվեն զոհերը: 3-7 համարներում պարզ ասվում է, որ այն զոհերը, որոնք հաճելի չեն Տիրոջը, Իրեն չեն մատուցվել: Կարողում ենք.«... Իսրայելի որդիները այն զոհերը, որոնք հիմա դաշտի մեջ են մորթում, Տիրոջը բերեն, այսինքն վկայության խորանի դռան մոտ, քահանային բերեն և խաղաղության զոհերի համար Տիրոջը զոհեն, և քահանան պետք է սրսկի արյունը վկայության խորանի դռան վրա՝ Տիրոջ սեղանի վրա ու ճարպը անուշ հոտի համար այրի Տիրոջ առջև: Եվ իրենց զոհերը այլևս թող չզոհեն դևերին, որոնց ետևից գնալով պոռնկություն

արեցին: Սա նրանց համար հավիտենական կանոն պիտի լինի իրենց սերնդի մեջ»: Աստված տվեց պատվերը և հստակ կարգադրություններ, թե ինչպես և ինչ պետք է արվեր: Իսրայելացիները համոզված էին, որ իրենք զոհաբերում էին Տիրոջը, բայց ամեն բան կատարում էին իրենց երևակայությամբ: Հետո Տերը հստակ հայտնեց, որ միայն այն զոհաբերություններն են Իրեն հաճելի, որոնք կատարվում են Իր պատվիրած վայրում և Իր պահանջած ձևով: Մնացած ամեն բան զոհաբերվում էր դևերին:

Նա, ով Աստծո ժողովրդի անդամ է, չի կարող անել այն, ինչ ուզում է: Եթե դա Տիրոջ համար է արվում, պետք է արվի Աստծո Խոսքի համաձայն: Հակառակ դեպքում, եթե մեր երևակայությունն է գործի դրվում, դևերը սկսում են գործել: Նույնը վերաբերում է Տերունական Ընթրիքին: Պողոսը, որպես հատուկ հայտնություն ունեցող առաքյալ, հստակ խոսել է այդ մասին: Նա չէր ուզում, որ հավատացյալները լինեն դևերի ազդեցության տակ և, չնայած դրան, մասնակից լինեն Տիրոջ սեղանին: Առաքյալների ժամանակ վեճեր չկային Տերունական Ընթրիքի վերաբերյալ: Տեր Հիսուսը տվել էր պատվեր, և հավատացյալները ամեն բան արեցին Աստծո Խոսքի համաձայն, կատարյալ պարզությամբ: Ահա թե ինչու Սուրբ Գիրքն ասում է, որ նրանք շարունակում էին հաց կտրելը: Գործք 20:7 համարում նույնպես կարդում ենք.« Մեկշաբթի օրը, երբ դեռ հավաքված էինք հաց կտրելու համար... »: «Հաց կտրել» արտահայտությունից հասկանում

ենք, որ Տերունական Ընթրիքի ժամանակ շեշտը դրվում էր հացի և հացը կտրելու վրա, ճիշտ այնպես, ինչպես Տերն Ինքն արեց և աշակերտներին պատվիրեց նույնն անել: Առաքելական ժամանակների վերաբերյալ կարդում ենք Գործք 2:42 համարում.« Ու միշտ հետևում էին առաքյալների ուսմունքին, հաղորդությանը, հաց

կտրելուն և աղոթելուն»:

Բոլոր նրանք, ովքեր իսկապես պատկանում են կենդանի Աստծո եկեղեցուն, կվերադառնան նույն՝ սկզբնական վարդապետությանը և գործերին: Նրանք ամեն բան իրենց ճիշտ տեղը կդնեն և այդ կանեն ըստ Սուրբ Գրքում ցույց տրված նմուշի: Այլևս չեն լինի հատուկ մեկնություններ, այլ պարզապես կհնազանդվեն Խոսքին: Հավատացյալների համար կարևորը միայն Խոսքն է: Ուստի ճշմարիտ եկեղեցին իրոք մասնակցում է Տերունական Ընթրիքին՝ ի հիշատակ Գողգոթայում կատարվածի: Այնտեղ սուրբ արյունը թափվեց մեր մեղքերի թողության համար: Սուրբ Գրքում ոչ մի տեղ զրված չէ, որ ով որ մասնակցում է Տերունական Ընթրիքին, ստանում է մեղքերի թողություն: Որտեղ որ այդպիսի բան է ուսուցանվում, այնտեղ փրկությունը կախված է կրոնական արարողությունից, ոչ թե Հիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած անձնական հավատքից:

Աստծո թագավորությունը սկսում է իր ընթացքը հենց հիմա: Խաչված և հարություն առած Հիսուս Քրիստոսի Ավետարանը կենդանի Աստծո եկեղեցուն դրվել է քարոզչության կենտրոնական տեղում: Այդ ավետարանով տրված ամեն պատվեր պետք է կատարել և պահել հնազանդությամբ: Այդ կերպ եկեղեցին վերադառնում է նախնական վիճակին Աստծո շնորհքով: Մեր Տերը Առաջինն է և Վերջինը, Նա նույնն է երեկ, այսօր ու հավիտյան: Երանի նրանց, ովքեր Նրան և Իր Խոսքին տալիս են ճշմարիտ տեղը և ճանաչում են, որ Նա է Տերը՝ կատարելով Նրա բոլոր պատվիրանները:

ՈՏԵԱԼՎԱ

Տերունական Ընթրիքի մասին խոսակցությունից հետո պետք է համառոտ քննարկենք ոտնավայի թեման: Նոր Կտակարանի այս պատվերի վերաբերյալ շարունակությունը կարդալուց առաջ, պետք է տեսնենք, թե Հին Կտակարանում ինչ էր հանձնարարված քահանաներին: Սրբության Սրբոց մտնելուց առաջ կար մի ավազան, որը պատրաստված էր աստվածային պատվերի համաձայն: Այն դրված էր զոհասեղանի և խորանի մեջտեղում: Մենք պետք է կարդանք Ելից 30:19 համարը. «Ահարոնն ու իր որդիները իրենց ձեռքերն ու ոտքերը թող լվանան դրանով»: Նրանք չէին կարող մտնել խորան կամ մոտենալ զոհասեղանին առանց նախապես ձեռքերն ու ոտքերը լվանալու: (հ.20) Իսկապես, ոտքերը լվանալով՝ մարդը ինքնաբերաբար լվանում է նաև ձեռքերը: Նոր Կտակարանում ճշմարիտ հավատացյալները կոչվում են սուրբ քահանայություն: Մենք պետք է գանք Աստծուն և Նրան մոտենանք ակնածանքով և հարգենք Իր Խոսքը ամեն ինչում:

Հովհ.13:4-10 համարներում Տերը սովեց հետևյալ օրինակը. «Ընթրիքից վեր կացավ, հագուստները վայր դրեց ու մի գոգնոց վերցրեց, մեջքին կապեց: Հետո կոնքի մեջ ջուր լցրեց ու սկսեց աշակերտների ոտքերը լվանալ և այն գոգնոցով սրբել, որ կապված էր մեջքին: Եվ Սիմոն Պետրոսի մոտ եկավ, նա ասաց նրան. «Տեր, Դու՞ ես իմ ոտքերը լվանում»: Հիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Ինչ, որ ես անում եմ, դու հիմա չես հասկանում, բայց սրանից հետո կհասկանաս»: Պետրոսը նրան ասաց. «Դու իմ ոտքերը հավիտյան չես լվանա»: Հիսուսը նրան պատասխանեց. «Եթե քեզ չլվանան, ինձ հետ բաժին չես ունենա»: Սիմոն Պետրոսը Նրան ասաց. «Տեր, ոչ միայն իմ ոտքերը, այլև իմ գլուխն ու ձեռքերն էլ»: Հիսուսը նրան ասաց. «Լվացվածին բան պետք չէ, բացի ոտքերը լվանալուց...»:

Եթե այս համարներին նայում ենք՝ պարզապես արձանագրելով կատարվածը, նույնիսկ չենք զգում, որ Աստված մեզ հետ է խոսում: Այն ժամանակ Տերն այդ խոսքերն ասաց այնտեղ ներկա եղողներին, այսօր էլ այդ նույն Խոսքը նույն ձևով ասում է նրանց, ովքեր ուզում են լինել Իր ներկայության մեջ: Այժմ մի պահ պետք է տեսնենք, թե ինչի միջով անցավ Պետրոսը: Նա հարցրեց. «Տեր, Դու՞ ես իմ ոտքերը լվանում»: Տերը պատասխանեց. «Ինչ, որ ես անում եմ, դու հիմա չես հասկանում, բայց սրանից հետո կհասկանաս»: Պետրոսը հաստատեց իր որոշումը և որոշեց պարզ ասել, թե ինչ նկատի ուներ. «Դու իմ ոտքերը հավիտյան չես լվանա»: Նա չէր ուզում, որ Տերը խոնարհվի Իր առջև և անի այն, ինչ պետք է աներ ծառաներից ամենափոքրը, եթե մեկը

մտներ տոււնը: Բայց Տերը և Վարդապետը Իր աշակերտներին տվեց շատ գործնական մի ուսուցում.«Եվ ձեր միջի մեծը ձեր սպասավորը լինի»: Փառաց Տերը ծառայեց խոնարհութեամբ՝ կատարելապես հանձնվելով ծառայությանը:Նա հանեց Իր հագուստները և փոխարենը գոգնոց վերցրեց, խոնարհվեց և դարձավ տան ամենափոքր ծառայի պես: Դա մի օրինակ էր Իր աշակերտների համար, որ ամեն ոք մյուսին պետք է Իրենից բարձր դասի: Այստեղ Նա գործնական դասով ցույց տվեց, թե ինչպես պետք է այդ անել: Երբ Տերը ասաց Պետրոսին. «Եթե քեզ չլվանամ, Ինձ հետ բաժին չես ունենա», նա ցնցվեց և կարողացավ միայն մեծ փափագով ասել այս խոսքերը.«Տեր, ոչ միայն իմ ոտքերը, այլև իմ գլուխն ու ձեռքերն էլ»: Ինչպե՞ս ենք հասկանում, որ Իր հետ բաժին չենք ունենա, եթե այդ կարգադրությունն ու պատվիրանը չկատարենք: Մի՞թե որևէ մեկը բաժին է ունենում Քրիստոսի՝ Տիրոջ հետ ոտնալվայի շնորհիվ: Կարևորն այստեղ Տիրոջ ասածին հնազանդվելն է: Մենք պետք է հնազանդվենք Իրեն և միմյանց: Եթե նույնիսկ Իր ասած որևէ բան այնքան էլ կարևոր չի թվում, բայց եթե Նա ասել է, լինի դա խնդրանք թե հրաման պետք է կատարենք պարզ, մանկական հավատքով, առանց հարցնելու, թե ինչու է Նա պահանջում այդ: Մենք չենք կարող հարցնել. «Ինչու՞ պետք է այդ անենք»: Եթե մենք չենք հնազանդվում Նրա Խոսքին, կորցնում ենք Նրա հետ հաղորդակցությունը, որովհետև Նա է տվել պատվերը: Շղթան ուժեղ է այնքան, որքան նրա ամենաթույլ օղակը: Մեզանից պահանջվում է ամեն բան կատարել Իր Խոսքի և պատվերների համաձայն, և մենք պետք է դա անենք հոժարությամբ և լրջորեն՝ հաճելի լինելու համար Նրան: Հովհ.13:12-17 համարներում կարդում ենք.«Եվ երբ նրանց ոտքերը լվաց, Իր հագուստները հագավ ու դարձյալ սեղան նստեց, և նրանց ասաց.«Գիտե՞ք ես ձեզ ի՞նչ արեցի: Դուք Ինձ «Վարդապետ» և «Տեր» եք կոչում և ճիշտ եք ասում, որովհետև այդ եմ: Արդ, եթե ես՝ Տերս ու Վարդապետս ձեր ոտքերը լվացի, դուք էլ պետք է իրար ոտքերը լվանաք: Որովհետև ես ձեզ օրինակ տվեցի, որ ինչպես ես ձեզ արեցի, այնպես էլ դուք անեք: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ.«Ծառան իր Տիրոջից մեծ չէ, ոչ էլ ուղարկվածն է իր ուղարկողից մեծ»: Եթե սա գիտեք, երանելի եք, թե որ այս անեք»:

Վարդապետի խոսքերը շատ պարզ են: Նա, որ այդ խոսքերը ընդունում է այնպես, ինչպես կան, չի կարող սխալ հասկանալ:«Արդ, եթե ես՝ Տերս ու Վարդապետս ձեր ոտքերը լվացի, դուք էլ պետք է իրար ոտքերը լվանաք»: Կարիք չկա բացատրություն և հատուկ մեկնաբանություն տալ: Երբ մեր Տերն ասաց, որ պետք է միմյանց ոտքերը լվանանք, Նա այդ ասում էր բառացիորեն. «...դուք էլ պետք

է իրար ոտքերը լվանաք»։ Դա ոչ մի կապ չունի արևելյան սովորույթի հետ։ Նա չէր խոսում ընդհանրապես ընդունված սովորության մասին։ Նա գիտեր այդ սովորույթի մասին, բայց հստակ ասաց.«Որովհետև ես ձեզ օրինակ տվեցի, որ ինչպես ես ձեզ արեցի, այնպես էլ դուք անեք»։ Դա մի հստակ պատվեր է, որ ոչ մի կերպ չի կարելի կասկածի տակ դնել։ Նա շեշտեց պատվիրանը այս խոսքերով.« Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ժառանգիր Տիրոջից մեծ չէ, ոչ էլ ուղարկվածն է իր ուղարկողից մեծ»։ Ամեն անգամ, երբ Տերն ասում է.«Ճշմարիտ, ճշմարիտ», պետք է հատուկ ուշադրություն դարձնենք, որովհետև Նա ընդգծում է ինչ-որ կարևոր բան։ Այստեղ՝ 13-րդ գլխում Նա այդ բառերն ասաց բազմաթիվ անգամ։ Ոտնալվայի մասին շատ բան կա ասելու։ Նոր Կտակարանի առաջին եկեղեցուն ոտնալվան հասկացել էին և կատարել առանց այդ մասին հաճախակի հիշատակելու։ Պողոսը մի անգամ խոսել է այն պայմանների մասին, որոնք պետք է բավարարեն այն այրիները, ովքեր պետք է վերցվեին տեղական եկեղեցու խնամքի տակ։ Այդ պայմանը դրվել էր նրա կողմից, ինչպես գրված է Ա ՏԻՄ.5:10 համարում. «Բարի գործերով վկայված, եթե երեխաներ է մեծացրել, հյուրեր ընդունել, սրբերի ոտքեր լվացել, նեղության մեջ գտնվողներին ձեռք մեկնել, ամեն բարի գործերի հետևել»։

Աստվածաշնչի համաձայն ցույց տվեցինք, որ ոտնալվան առաջինը կատարեց մեր Տերը և անձամբ գործնական օրինակ տվեց։ Ուստի, նա, ով իսկապես անկեղծ է, չի կարող այդ բաները վիճարկել։ Պետք է կատարել այդ պատվիրանը և հնազանդվել։ Եթե ինչ-որ մեկը բացատրում է որևէ համար և լսողներին մղում չհնազանդվել Աստծո տված պատվիրանին, ի՞նչն է նրա շարժառիթը։ Յուրաքանչյուր հավատացյալի համար Աստծո խոսքը պետք է սուրբ լինի, և մենք պետք է պատրաստ լինենք հնազանդվելու և կատարելու ամենափոքր պատվիրանը։ Այսպիսի դեպքերում Տերն ասում է.«Եթե սա գիտեք, երանելի եք, թե որ այս անեք»։ Սկզբից մինչև վերջ երանությունը հանգչում է նրանց վրա, ովքեր կատարում են Աստծո խոսքը, ոչ թե միայն լսում են և չեն հնազանդվում։ Թող Տերը մեզ դարձնի այնպիսի մարդիկ, ովքեր քայլում են Իր ճանապարհներով, կատարում Նրա պատվիրանները, նույնիսկ այս հարցում։ Մի հարցրեք՝ ինչու՞, մի ասե՛ք՝ դա անհիմաստ է, մի հավատացե՛ք, որ անհրաժեշտ չէ։ Տերն է ասել այդ, պատվիրել այդ, կատարել այդ և Նա ասել է.« Որովհետև ես ձեզ օրինակ տվեցի, որ ինչպես ես ձեզ արեցի, այնպես էլ դուք անեք»։

Դա է «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» Իր խոսքում։ Ամեն

Contents

| | |
|------------------------------|----|
| Ներածություն | 3 |
| ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ | 6 |
| Անհրաժեշտությունը | 6 |
| Նշանակությունը | 8 |
| Պայմանը | 10 |
| Անունը | 13 |
| Առաքյալների վարդապետությունը | 15 |
| Հոգիների զանազանում | 19 |
| ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԸ | 24 |
| Պարզաբանում | 30 |
| ՈՏՆԱԼԿԱ | 37 |

